**Research aim:** The aim of the research is to study the effectiveness of the developed method of speed development among young athletes specializing in short-distance running.

**Research methods and organization:** The methods of the research are analysis, synthesis and generalization of theoretical sources on the problem of research, observation, and testing, pedagogical experiment, quantitative and qualitative data processing. The task of the study is:

1. To theoretically justify the problem of speed development in young athletes on short distances.
2. To develop a method of speed development among young athletes at short distances.
3. To evaluate the effectiveness of the developed method according to indicators of speed development in young athletes at the age of 11-12 at short distances.

**Research results and analysis:** As control exercises 30 m high start run, 100 m high start run, standing long jump, shuttle run 3x10 m were used. In the running control exercises, the time was recorded with a manual electronic stopwatch and rounded up to the tenth of a second. In jumping exercises, the result was fixed with a centimeter tape measure. Processing of research materials did not reveal any significant differences in the level of physical fitness of young runners in the control and experimental groups ( $p > 0.05$ ).

The basis of the model is a systematic approach, the basis of which allows creating a rational algorithm for the use of special exercises that provide an increase in the speed of runners at sprint distances. In the model, great attention is paid to the implementation of factors, pedagogical conditions and pedagogical influences that contribute to the achievement of the set goal and solving the tasks of sports training. As a result of the research, it can be concluded that the changes made in the methodology are effective.

**Conclusion:** As a result of the research, the following conclusions can be drawn. Speed and high-speed strength are qualities that manifest themselves in very diverse and specific ways in various physical actions of a person.

The analysis of the scientific and methodological literature showed that at the age of 11-12 a child's body undergoes the most complex restructuring and sports training. In particular, short-distance running can have both a positive and a negative impact on the

child's growth and development. Knowing the anatomical, physiological and psychological features of the development of children aged 11-12 years and taking into account the revealed methodological techniques in training activities will contribute not only to the natural course of growth and development of the child's body, but also to the improvement of the quality of the educational and training process in short-distance running classes.

### ***Сведения об авторах***

Տմբատյան Վարդան Ավետիսովիչ: Կ.Պ.Ն., դոցենտ կաբեդրա ցիկլիկեսկի վիճակ սպորտա, Արմանսկի գոսուճարստեննիյ ինստիտուտ ֆիզիկեսկոյ կուլտուրա և սպորտա Երևան Արմանիա,  
E.mail, [vardan.smbatyan@sportedu.am](mailto:vardan.smbatyan@sportedu.am).

Տիմոնյան Կիգրան Գրիգորիևիչ: Կ.Պ.Ն., դոցենտ կաբեդրա ցիկլիկեսկի վիճակ սպորտա, Արմանսկի գոսուճարստեննիյ ինստիտուտ ֆիզիկեսկոյ կուլտուրա և սպորտա Երևան Արմանիա,  
E.mail: [tigran.simonyan@sportedu.am](mailto:tigran.simonyan@sportedu.am).

### ***Information about the authors***

Vardan Avetis Smbatyan, PhD, Associate Professor of the Chair of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,  
E-mail:[vardan.smbatyan@sportedu.am](mailto:vardan.smbatyan@sportedu.am).

Tigran Grigor Simonyan, PhD, Associate Professor of the Chair of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,  
E-mail: [tigran.simonyan@sportedu.am](mailto:tigran.simonyan@sportedu.am).

Հոդվածն ընդունվել է 13.04.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 14.04.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

UDC 796.433.3

DOI: 10.53068/25792997-2023.2.9-119

## THE CORRELATION OF DISCUS THROWERS' MOTOR ABILITY INDICATORS AND SPORT RESULTS

*M. A. Harutyunyan**Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia*

**Keywords:** discus throwing, physical fitness, correlation coefficient, agility, sprint abilities, anthropometry.

**Research relevance:** Discus throwing is a complex technical athletic acyclic competition requiring an athlete not only a high level of physical and technical training, but also a full demonstration of coordination abilities[1, 4, 9]. It should be mentioned that for any sport, there is a specific "model" athlete that the athlete must conform to. Therefore, there are certain requirements during the discus throw that the modern discus thrower must meet, in terms of both physical fitness and physical development indicators [3, 5, 7]. For a long time, scientific research has been aimed at improving the physical training of discus throwers, improving their techniques, studying biomechanical indicators and predicting sports results [5, 6, 9].

However, the correlation between the leading motor abilities and the athletic results of discus throwers have not been

sufficiently studied; this is what underlines the relevance of the study.

Nowadays, the results of discus throwing are quite high, but still not ultimate. Current athletic high results in this sport require effective use of the latest methods and means in training [2, 3, 7].

Long-term preparation for training is a complex pedagogical process, the effectiveness of which is determined by many factors on which a high sports result depends[1, 9].

The level of increase in sport results is provided by the increase in the volume of the training load. Athletes spend an average of 400-440 training sessions during a year, with a total duration of 1200-1500 hours, consistently took the place of training twice a day, and moreover, in some sports, three times trainings have also taken place [1, 2, 8].

During the training of discus throwers, various methods and means are used for the purpose of developing different motor abilities, strength and speed abilities(sprint abilities), as well as technical preparation. In the

annual training cycle strength training should be built on the principle of gradually increasing the intensity of training work and should be combined with technical training [1, 2, 6].

The preparation of a high-level athlete is a complex process and involves many interrelated factors. According to professional analysis, the training of discus players is mainly focused on the development of motor skills, which is based on the general patterns of physical development and is determined by the mutual connection of athletic indicators. It is known that training in every sport should be based on general physical preparation, which is the basis of the process of developing motor skills [2, 5, 7].

In the process of discus throwers' physical training, a special place is given to the development of speed and strength abilities. It is no coincidence that this athletic competition is characterized as a sprint exercise.

**Research aim:** The aim of the study is to determine correlations between speed, strength, sprint exercises with the athletic results of discus throwers.

**Research problems:** 1. To Investigate discus throwers' fitness level, speed and sprint abilities. 2. To determine the correlation between the indicators of the anthropometric and motor abilities of the researched discus throwers with sport result. 3. To

Group exercises according to nature and impact with an appropriate correlation coefficient.

**Research methods and organization:**

In order to carry out the research, general pedagogical methods were used: study of academic literature, pedagogical observation and testing, anthropometry. Methods of mathematical statistics, in particular, correlation analysis, were used to analyze the results and the correlation between verification test results and sport results was determined. The study was carried out in the 2022-23 sports season, with the participation of eight strongest discus throwers of the republic.


**Research results and analysis:** As a result of the analysis of the obtained results, it was revealed that speed-strength or sprint exercises used in the training process of discus throwers participating in our study, as well as anthropometric indicators have different levels of correlation with sports results. The analysis of anthropometric indicators shows that there was an average correlation of ( $r_s=0.523$ ) between the height of the discus throwers and the sport results. The scientific and methodical literature prove that the relationship between athletic results and body height do not have a significant impact on the distance of the discus flight, as the average height of the

discus release is 180-185 cm, which does not affect athletic results in long throws [1, 3, 4].

Among the anthropometric indicators, the length of the arm span of the discus thrower is of significant importance. According to specialists, it is from 10 to 22 cm longer than the height, which allows to extend the length of the path affecting the discus; the initial speed transmitted to the discus (10-12 m/s) depends on it [3, 5]. A high ( $r_s=0.884$ )

correlation with sports results was also observed among discus throwers participating in our study.

The correlation coefficient between athlete's weight and sport results is high ( $r_s=0.887$ ). Considering the fact that the discus is a rather heavy instrument (2 kg), the personal weight factor of the throwers has a significant effect on how far the instrument will fly.



**Figure: Correlation coefficient between the sports result of the disco throw and control exercises**

The results of running exercises characterizing the agility of the research participants have a relative average correlation with the athletic result of the discus throw:

running 30 m from a high start:  $r_s=0.521$  and running 30 m from a low start:  $r_s=0.582$ . According to academic literature, the distance of the discus flight primarily

depends on the speed transmitted to the discus, which is achieved during the initial conversion and the speed of the final effort [3, 5, 8, 11]. Hence, it can be assumed that the higher the level of agility of an athlete, the higher the speed transmitted to the discus, the sports result also depends on it. In our opinion, the average correlation among our researched participants is due to this circumstance. All this also depends on the efficiency of the thrower's technique, which is evaluated by the difference between the result shown from the place and from the turning. With the best technique, this difference is 8-12 m [1, 8], and with our researched participants this difference was 3-4 m. It can be assumed that with a good mastery of the discus throwing technique, the correlation coefficient will also be high.

Analysis of the results of sprint exercises showed that all control tests have high correlation with the sports result of discus throwing: long jump from the place  $r_s=0.726$ , triple jump from the place  $r_s=0.704$ , shot put forward:  $r_s=0.792$  and shot put behind the head:  $r_s=0.790$ . Discus throwing is considered one of the athletics sprint competitions and is characterized as a short-term but maximum muscle tension action, so the above exercises used in the training process can be considered the main ones [4, 6, 9, 10].

As expected, almost all indicators of discus throwers' strength training have a high correlation coefficient with athletic results: squat barbell:  $r_s=0.845$ , barbell deadlift:  $r_s=0.800$ , and barbell chest raise:  $r_s=0.834$ . To throw the discus far, an athlete must have excellent strength fitness, which is also indicated through the results of our study.

Of course, the testing exercises used in the training process of the discus thrower are not limited to the above-mentioned exercises, other exercises are also used, for example, five-fold jumps, right and left lunges throwing weights forward, barbell pull-ups, etc.. However all the exercise, that are used, are different in their nature and influence. Thus, it is advisable to group them according to their nature and influence. Exercises with high correlation coefficient can be considered basic exercises. Exercises with average correlation coefficient are used as supporting exercises, and exercises with low correlation are auxiliary or additional exercises. Of course, in the further process of training, these indicators may undergo changes along with the growth of sports results.

**Conclusion:** 1. The anthropometric indicators of the research participants, as well as the results obtained from the physical exercises, are related to the sports results, regardless of the correlation coefficient. 2. In

the discus throwers' training process it is necessary to pay attention to those exercises, the correlation of which is relatively low with the sports results.3. Sprint and strength exercises used in discus training workouts are diverse, so it is appropriate to group them according to the correlation

coefficient. Exercises with high correlation should be considered as core, exercises with average correlation as supporting, and exercises with low correlation as additional or supplementary.4.The relative correlation coefficient may change due to changes in the sports results.

#### Diagram:

- |                                   |                             |
|-----------------------------------|-----------------------------|
| 1. Body Height                    | 8. Shot Put Forward         |
| 2. Body Weight                    | 9. Shot Put Behind the Head |
| 3. Arm Span Length                | 10. Squat Barbell           |
| 4. Running 30 m from a High Start | 11.Flat Barbell Press       |
| 5. Running from a Low Start       | 12. Barbell Deadlift        |
| 6. Long Jump from the Place       | 13. Barbell Chest Raise     |
| 7. Triple jump from the place     |                             |

#### 📖 REFERENCES

1. Балахничев В., Зеличенк В. (ред.): Бегай! Прыгай! Метай! Официальное руководство ИААФ по обучению легкой атлетике: М.: 2017.- 215 с.
2. Воронкин В.И. Система подготовки спортсменов высшей квалификации в легкоатлетических метаниях. М.- 1984.- 91 с.
3. Грецов Г. В., Войнова С. Е., Германова А. А. Легкая атлетика: учебник для студ. учреждений высш. образования: под ред. Грецова Г. В., Янковского А. Б.. - 2-е изд., стер.- М.: Издательский центр «Академия», 2014 - 288 с.
4. Зациорский В. М. Физические качества спортсмена: основы теории и методики воспитания [Текст] / В. М. Зациорский.- 4-е изд.- М.: Спорт, 2019.- 200 с.: ил.
5. Мачканова Е. В. Режимы тренировочных нагрузок квалифицированных метательниц диска на этапе непосредственной предсоревновательной подготовки: автореф. дис. д-ра пед. наук / Е. В. Мачканова.- М.: 2010.- 23 с.
6. Костюченко В. Ф., Врублевский Е. П. Особенности индивидуальной тренировочной деятельности спортсменок высокой квалификации в годичном цикле подготовки / В. Ф. Костюченко, Е. П. Врублевский // Ученые записки университета им. П. Ф. Лесгафта.- 2009.- № 3 (49).- С. 39-43.



7. Мехрикадзе В. В., Позюбанов Э. П., Аврутин С. Ю., Метание диска: пособие / Минск: БГУФК, 2012.- 63 с.
8. [https://world-sport.org/acyclic/throwing\\_disk/technology/11](https://world-sport.org/acyclic/throwing_disk/technology/11). [Մուտք՝ 07.02.2023]
9. [https://world-sport.org/acyclic/throwing\\_disk/education\\_drill/](https://world-sport.org/acyclic/throwing_disk/education_drill/) [Մուտք՝ 11.02.2023]

## ՍԿԱՎԱՌԱԿԱՆԵՏՈՐԴՆԵՐԻ ՇԱՐԺՈՂԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

*Մ. Ա. Հարությունյան*

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պեդագոգական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

### ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Առանցքային բառեր:** Սկավառականետում, ֆիզիկական պատրաստվածություն, հարաբերակցական փոխկապվածություն, արագաշարժություն, ուժ, արագաուժային ընդունակություն:

**Հետազոտության արդիականություն:** Սկավառականետումը աթլետիկական բարդ տեխնիկական ացիկլիկ, արագաուժային մրցածև է, որը մարզիկից պահանջում է ոչ միայն ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության բարձր մակարդակ, այլև կոորդինացիոն ընդունակությունների լիարժեք դրսևորում: Տևական ժամանակ է, ինչ ոլորտի գիտահետազոտական աշխատանքներն ուղղված են նետորդների ֆիզիկական պատրաստվածության, տեխնիկայի կատարելագործման, կենսամեխանիկական ցուցանիշների ուսունասիրման և մարզական արդյունքների կանխատեսմանը:

Սկավառականետորդների ֆիզիկական պատրաստության գործընթացում առանձնահատուկ տեղ է հատկացվում արագային և ուժային ընդունակությունների մշակմանը: Պատահական չէ, որ աթլետիկական այս մրցածևը բնութագրվում է՝ որպես արագաուժային բնույթի վարժություն:

**Հետազոտության նպատակն է՝** որոշել սկավառականետորդների մարզումներում կիրառվող արագային, ուժային և արագաուժային վարժությունների հարաբերակցական փոխկապվածությունը մարզական արդյունքի հետ:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Հետազոտությունն իրականացնելու նպատակով օգտագործել ենք ընդհանուր մանկավարժական մեթոդներ՝ մասնագիտական գրականության ուսումնասիրում, մանկավարժական դիտարկում և

թեստավորում, մրցակցական մեթոդ: Արդյունքների վերլուծության նպատակով կիրառվել է մաթեմատիկական վիճակագրություն, որոշվել է՝ ստուգողական թեստավորման արդյունքների հարաբերակցական փոխկապվածությունը մարզական արդյունքի հետ: Հետազոտությունն իրականացվել է 2022-2023 մրցաշրջանում, որին մասնակցել են հանրապետության ուժեղագույն ութ սկավառականետորդներ:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Ստացված արդյունքների վերլուծությունից պարզվեց, որ մեր հետազոտության մասնակից սկավառականետորդների մարզումային գործընթացում կիրառվող արագաուժային և ուժային բնույթի վարժությունները, ինչպես նաև մարդաչափական ցուցանիշներն ունեն տարբեր հարաբերակցական փոխկապվածություն մարզական արդյունքի հետ: Մարմնի հասակը և արագաշարժությունը գնահատող ստուգողական վարժությունները սկավառականետման մարզական արդյունքի հետ ունեն միջին հարաբերակցական փոխկապվածություն, իսկ մարմնի քաշը, ձեռքերի բացվածքը, արագաուժային և ուժային ստուգողական վարժությունները՝ բարձր:

**Համառոտ եզրակացություն:** Մարզական բարձր արդյունքի հասնելու համար մարզիկից պահանջվում է տիրապետել վարժության կատարյալ տեխնիկային, ունենալ արագաուժային, ուժային բարձր պատրաստվածություն և կամային բարձր որակներ: Սկավառականետորդի մարզումներում կիրառվող արագաուժային և ուժային վարժությունները բազմազան են, ուստի նպատակահարմար է դրանք խմբավորել՝ ըստ հարաբերակցական փոխկապվածության գործակցի: Բարձր փոխկապվածություն ունեցող վարժությունները համարել հիմնական, միջին փոխկապվածության ունեցող վարժությունները՝ նպաստող, ցածր փոխկապվածություն ունեցող վարժությունները՝ օժանդակ կամ լրացուցիչ:

## ВЗАИМОСВЯЗЬ ПОКАЗАТЕЛЕЙ ДВИГАТЕЛЬНЫХ СПОСОБНОСТЕЙ СО СПОРТИВНЫМИ РЕЗУЛЬТАТАМИ У МЕТАТЕЛЕЙ ДИСКА

*М. А. Арутюнян*

*Государственный институт физической культуры и спорта Армении, Ереван, Армения*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** метание диска, физическая подготовка, корреляция, быстрота движений, сила, скоростно-силовые способности, антропометрия.

**Актуальность исследования.** Метание диска – сложное техническое атлетическое ациклическое упражнение, требующее от спортсмена не только высокого уровня физической и технической подготовки, но и проявления отдельных двигательных способностей. На протяжении длительного времени научные исследования были направлены на совершенствование физической подготовки метателей диска, совершенствование их техники, изучение биомеханических показателей и прогнозирование спортивных результатов. Однако, недостаточно изучены взаимосвязи между ведущими двигательными способностями и спортивными результатами метателей диска, именно это подчеркивает актуальность исследования.

**Цель исследования** – определить корреляционные связи между скоростными, силовыми, скоростно-силовыми упражнениями со спортивными результатами у метателей диска.

**Методы и организация исследования.** Для проведения исследования использовались общепедагогические методы: изучение специальной литературы, педагогическое наблюдение и тестирование, антропометрия. Для анализа результатов использовались методы математической статистики, в частности, корреляционный анализ. Исследование проводилось в спортивном сезоне 2022-23 гг., в котором участвовали восемь сильнейших метателей диска республики.

**Анализ результатов.** В итоге анализа полученных результатов было установлено, что скоростно-силовые упражнения, используемые в тренировочном процессе метателей диска, участвовавших в нашем исследовании, а также антропометрические показатели имеют разные уровни корреляционной связи со спортивными результатами. Тесты, оценивающие признаки длины тела и быстроты движений, имеют умеренную корреляцию со спортивными результатами в метании диска, а тесты массы тела, размаха рук, быстроты движений и силы – высокую.

**Краткие выводы.** Для достижения высокого спортивного результата от спортсмена требуется совершенное владение техникой упражнений, высокая скорость, силовая подготовка и достаточные волевые качества. Скоростно-силовые упражнения, используемые при тренировке в метании диска, разнообразны, поэтому их целесообразно сгруппировать по величине коэффициента корреляционной связи. Следует считать упражнения с высокой корреляцией основными, упражнения со средней корреляцией - поддерживающими, а упражнения с низкой корреляцией – вспомогательными.

### ***Տեղեկություններ հեղինակի մասին***

Մարինե Արամայիսի Հարությունյան՝ Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E-mail: [marine.harutyunyan@sportedu.am](mailto:marine.harutyunyan@sportedu.am),

### ***Information about the author***

Marine Aramays Harutyunyan, lecturer of the Department of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [marine.harutyunyan@sportedu.am](mailto:marine.harutyunyan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 19.05.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 20.05.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

**ԲԱԺԻՆ 3. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

ՀԴՏ 316:796 60.564.03

DOI: 10.53068/25792997-2023.2.9-128

**ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՖԻԶԿՈՒՆՏՈՒՐԱՅԻՆ-ՍՊՈՐՏԱՅԻՆ  
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ  
ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

*Հ. Գ. Թումանյան, Վ. Մ. Ավագիմյանց, Լ. Ա. Մելքոնյան  
Երևանի պետական համալսարան,  
Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Հետաքրքրություններ, արժեքային կողմնորոշումներ, ուսանողներ, սոցիոլոգիական հարցում, լոդ, հրաձգություն, ֆիզիկական դաստիարակություն, կենսակերպ:

**Հետազոտության արդիականությունը:** Արժեքային կողմնորոշումները, ինչպես հայտնի է [2,3] մարդու համեմատաբար կայուն և ընտրողական վերաբերմունքն է նյութական և հոգևոր բարիքների և իդեալների ընդհանրությանը, որոնք դիտարկվում են՝ որպես անձի կենսագործունեության պահանջների բավարարման առարկաներ, նպատակներ կամ միջոցներ: Արժեքային կողմնորոշումները կարծես ընդգրկում են ամբողջ կենսական փորձը, որը կուտակվում է մարդու անհատական զարգացման ընթացքում: Արժեքային կողմնորոշումների խնդիրն անմիջականորեն կապված է նաև կրթության, մասնագիտության ընտրության, անձի սոցիալական դիրքի, ֆիզկուլտուրային-սպորտային հետաքրքրությունների հարցերի հետ:

Ֆիզիկական դաստիարակության համակարգի ժողովրդավարացումը և հումանիզմը մեր երկրի բուհերում թույլ են տվել առաջ բերել նոր հիմնային նպատակային խնդիր, այն է՝ անձի ֆիզիկական մշակույթի ձևավորումը: Նման միտումը բնորոշ է նաև աշխարհի տարբեր երկրների ուսումնական հաստատություններին: Այդ խնդրի հաջող իրացման համար անհրաժեշտ է տիրապետել համապատասխան տեղեկատվության [4,6,7]:

Գրական աղբյուրների վերլուծությունը վկայում է այն մասին, որ 21-րդ դարի սկիզբն իր հետ բերեց ուսանող-երիտասարդության ֆունկցիոնալ հնարավորությունների զգալի նվազում: Բնականաբար, վերջինս կապված է այն բանի հետ, որ նվազել է հետաքրքրությունը ֆիզիկական վարժություններով և սպորտով կանոնակարգված կերպով զբաղվելու հանդեպ, ինչպես նաև նստակյաց կենսակերպի և այլ գործոնների հետ [1,5,8]:

Ժամանակակից պայմաններում բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագետներ պատրաստելու համար, բնականաբար, պահանջվում են ուսումնական գործընթացի ինտենսիֆիկացման նոր միջոցներ և մեթոդներ՝ նաև ֆիզիկական դաստիարակության ոլորտում: Վերջինս պայմանավորված է նրանով, որ վաղվա օրվա մասնագետը, բարձր մասնագիտական գիտելիքների հետ մեկտեղ, պետք է օժտված լինի ամուր առողջությամբ, շարժողական պատրաստվածության և աշխատունակության բավարար մակարդակով:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Պարզել առաջին կուրսի ուսանողների հետաքրքրությունը և վերաբերմունքը ֆիզկուլտուրային-սպորտային գործունեության հանդեպ:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Հետազոտության հենքային մեթոդներն են՝ գիտական-մեթոդական գրականության տվյալների ուսումնասիրությունը, վերլուծությունը և ընդհանրացումը, ինչպես նաև սոցիոլոգիական հարցումը: Սոցիոլոգիական հարցումն անցկացվել է՝ ըստ մշակված հեղինակային հարցաթերթիկի՝ 2013թ. (2008-2013 ուստարի) և 2023 (2021-2023 ուստարի) ԵՊՀ ֆակուլտետների բազայի հիման վրա, որին մասնակցել են 13 575 առաջին կուրսի ուսանողներ:

**Հետազոտության արդյունքները և վերլուծությունը:** Բազմամյա հետազոտությունների ամփոփիչ տվյալները պատկերված են ներքոհիշյալ աղյուսակում:

Աղյուսակ

*Սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ տրվածներով*

		2013 թ.		2023 թ.	
		Տղաներ	Աղջիկներ	Տղաներ	Աղջիկներ
	Ցուցանիշներ.	n=3996	n=6953	n=844	n=1782
1.	ուսանողների քանակը	36,5	63,5	32,2	67,8
2.	լողալ կարող են	68,3	35,2	56,6	31,8
3.	լողալ չեն կարող	31,7	64,8	43,4	68,2
4.	հրաձգություն	-	-	-	-
5.	սկսնակ մարզիկներ	32,7	17,8	41,2	19,8
6.	սպորտով կանոնավոր պարապող մարզիկներ	28,1	8,5	27,5	6,3
7.	պարարվեստով զբաղվածներ	-	14,7	-	15,0

Աղյուսակի տվյալներից երևում է, որ 2013 թ. և 2023 թ. հետազոտությունների արդյունքում ուսանողության գերակշիռ մասը կազմում են աղջիկները: Միաժամանակ նկատվում է, որ տարեցտարի նվազում է բուհ ընդունվող տղաների քանակը: Դա առավելապես նկատվում է հումանիտար ֆակուլտետներում, հատկապես՝ բանասիրության ճյուղում: Այսպես՝ համալսարանի «Հայ բանասիրության», «Ռուս բանասիրության», «Եվրոպական լեզուների և հաղորդակցության», «Ընդհանուր մանկավարժության» ֆակուլտետներում վերջին տարիներին տղաների քանակը զգալիորեն պակասել է, իսկ առանձին բաժիններում տղաներ ընդհանրապես չեն ընդունվում:

Հայտնի է, որ ֆիզիկական դաստիարակության համակարգում որպես ուսումնական առարկա առանձնահատուկ ուշադրության է արժանի այնպիսի կիրառական և պաշտպանական նշանակություն ունեցող մարզաձևեր, ինչպիսիք են լողն ու հրաձգությունը, որոնք իրենց տեղն են գտել բոլոր ուսումնական հաստատությունների ֆիզիկական դաստիարակության ծրագրերում:

Ինչպես երևում է աղյուսակից, «լողալ կարող եք» հարցին 2013թ. տվյալներով դրական պատասխան են տվել մասնակից տղաների 68,3 % -ը, աղջիկների 35,2%-ը, իսկ 2023թ. լողալ իմացող տղաները կազմել են 56,6%-ը, աղջիկները՝

31,8%-ը: Փաստորեն տաս տարիների ընթացքում լողալ չիմացողների թիվը և տղաների, և աղջիկների մոտ զգալիորեն ավելացել է, որը տազնապալի երևույթ է ժամանակակից սոցիալական պայմաններում:

Առավել տազնապալի է հրաձգության վիճակը, որ ոչ մի ուսանող մինչև բուհ ընդունվելը կանոնավոր չի զբաղվել հրաձգությամբ: Առավել ևս արական սեռի ուսանողները հետաքրքրություն չեն ցուցաբերում հրաձգության նկատմամբ՝ որպես ժամանակակից ռազմակիրառական մարզաձև ազգային բանակում հաջողությամբ ծառայելու համար:

Պարզապես հարկ ենք համարում նշել նաև, որ բուհական կրթության համակարգում ֆիզդաստիարակության ծրագրում չի իրականացվում ՀՀ կառավարության որոշումները [5]:

Ինչ վերաբերվում է սպորտով կանոնավոր պարապող արդեն առաջին կուրսեցիներին, ապա պարզվում է, որ 10 տարիների ընթացքում այդ ցուցանիշները երկու սեռի հարցվողների մոտ էապես չեն փոփոխվել:

Հարկ է նշել նաև, որ առաջին կուրսեցի աղջիկների շուրջ 15 %-ը կանոնավոր պարապել են նաև ազգային և լատինական պարերով:

Հետևաբար բերված փաստացի տվյալները վկայում են, որ աստիճանաբար նվազում է երիտասարդության

հետաքրքրությունը կանոնավոր սպորտային պարապմունքների հանդեպ.

Կատարված հետազոտության արդյունքից կարելի է կատարել հետևյալ ամփոփումները:

**Եզրակացություն:** Դպրոցական ֆիզկուլտուրային կրթության համակարգում դեռևս ոչ բավարար է լուսաբանվում «Գիտելիքների հիմունքներ» բաժինը, որը նպաստում է՝ ընդլայնելու դպրոցականների հետաքրքրությունները ֆիզկուլտուրայի մարզական գործունեության նկատմամբ.

- Անհրաժեշտ է ընդլայնել նախնական զինվորական պատրաստության առարկայի «Հրաձգային» պատրաստության գործնական բաժնի ծավալը:

- Համապատասխան սպորտային կառույցներում հնարավորություն ստեղծել

անվճար կամ զեղչ պայմաններ դպրոցականների լողուսուցման համար:

- Դեռևս ոչ բավարար չափով է իրականացվում Կառավարության որոշումները հատկապես կիրառական և պաշտպանականության մարզաձևեր լողի և հրաձգության նկատմամբ:

- Մտահոգության կարիք է առաջացնում այն փաստը, որ տարեցտարի համալսարան ընդունվող արական սեռի ուսանողների քանակը նվազում է հատկապես բանասիրության թեքումով ֆակուլտետներում:

- Հարկ է նշել, որ բուհ ընդունված ուսանողների մեծամասնությունը դպրոցական տարիներին կանոնավոր չեն զբաղվում ֆիզիկական վարժություններով. պետական չափորոշիչներից ունեն շատ ցածր ֆիզիկական պատրաստություն:

## 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավագիմյանց Վ. Մ., Սպորտային հրաձգություն, Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2020, 79 էջ:
2. Գրիգորյան Յու. Գ., Թումանյան Հ. Գ., Գալոյան Ռ. Զ., Սանթրոսյան Ս. Գ., Ուսանողների վերաբերմունքը ֆիզիկական կուլտուրայի հանդեպ, Հանրապետական 28-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2001, էջ 15:
3. Թումանյան Հ. Գ., Գուլասարյան Զ. Գ., Գասպարյան Լ. Վ., Բուհում ֆիզիկական դաստիարակության գործընթացի բարելավման հարցեր, Հանրապետական, 40-րդ գիտամեթոդական կոնֆերանսի նյութեր, Երևան, 2013, էջ 139-142:



4. Թումանյան Հ. Գ., Ավագիմյանց Վ. Մ., Մելքոնյան Լ. Ա., Ուսանողուհիների ֆիզիկական զարգացման հատկանիշների դարակազմիկ տեղաշարժերը, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական №2, Երևան, 2020, էջ 37-43:
5. ՀՀ կառավարության 2008թ. №53 որոշումը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման 2009-2012 թ. ծրագրի մասին:
6. Խաչատրյան Ս. Գ., Գրիգորյան Լ.Գ., Քոսակյան Ա. Լ., Ֆիզիկական կուլտուրան ուսանողների օրակարգում, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական N 1, , Երևան, 2020, էջ 93-99:
7. Мишкова Т. А., Морфофункциональные особенности и адаптационные возможности современной студенческой молодежи: Автореф. дисс., канд. биолог. наук, М., 2010, 24 с.

## PHYSICAL CULTURE AND SPORT INTERESTS AND VALUE SYSTEM OF FIRST-YEAR STUDENTS IN THE ASPECT OF A SOCIOLOGICAL SURVEY

G. G. Tumanyan, V. M. Avagimyants, L. A. Melqonyan  
Yerevan State University,  
Yerevan, Armenia

### ABSTRACT

**Key words:** interests, value system, swimming, shooting practice, physical education, mode of life.

**Research relevance:** The problem of value system is directly related to the issues of education, choice of profession, physical culture and sports interests. The article analyzes the results of a sociological survey of Yerevan State University students.

**Research aim:** The aim of the research is an attempt to find out interests and attitudes of first-year students to physical culture and sport activities.

**Research methods and organization:** The methods of studying and summarizing the available literary sources on the problem, as well as a sociological survey were used in the research. More than thirteen thousand YSU students /2013-2023/ participated in the research.

**Research results and analysis:** As a result of a ten-year comparative studies, it turned out that from 32 to 43% of male students and 64-68% of female students entering the first year of YSU, unfortunately, do not know how to swim. All respondents were not specifically

involved in shooting. These are disturbing facts, because, especially nowadays, these two sports have an important practical meaning. There is still insufficient coverage of first-year students in systematic classes in various sports.

**Conclusion:** YSU entrants still have a weak level of motor fitness due to their insufficient involvement in systematic trainings in various sports. It is necessary to expand the section <Shooting training> in the school course of basic physical training. It is necessary to create an opportunity in appropriate sports facilities to teach students swimming on a free basis and on favorable terms.

### ФИЗКУЛЬТУРНО-СПОРТИВНЫЕ ИНТЕРЕСЫ И ЦЕННОСТНЫЕ ОРИЕНТАЦИИ СТУДЕНТОВ-ПЕРВОКУРСНИКОВ В АСПЕКТЕ СОЦИОЛОГИЧЕСКОГО ОПРОСА

*Г. Г. Туманян, В. М. Авагимянц, Л. А. Мелконян  
Ереванский государственный  
университет, Ереван, Армения*

#### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** интересы, ценностные ориентации, плавание, стрельба, физическое воспитание, образ жизни.

**Актуальность исследования.** Проблема ценностных ориентаций непосредственно связана с вопросами образования, выбора профессии, физкультурно-спортивными интересами. В статье анализируются результаты социологического опроса студентов Ереванского государственного университета.

**Цель исследования.** Сделана попытка выявить интересы и отношение студентов-первокурсников к физкультурно-спортивной деятельности.

**Методы и организация исследования.** Использованы методы изучения и обобщения доступных литературных источников по проблеме и социологический опрос. В исследовании приняли участие более 13 тысяч студентов ЕГУ в 2013 и 2023 гг.

**Анализ полученных результатов.** В итоге десятилетних сравнительных исследований оказалось что от 32 до 43 % студентов мужского пола и 64-68 % женского пола, поступившие на I курс ЕГУ, к сожалению, не умеют плавать. Все опрошенные респонденты специально не занимались стрельбой. Это тревожные факты, ибо эти оба вида спорта имеют важное прикладное значение особенно в настоящее время.

Недостаточен еще охват студентов-первокурсников в систематические занятия разными видами спорта.

**Краткие выводы.** Абитуриенты ЕГУ имеют еще слабый уровень двигательной подготовленности в силу недостаточной их вовлеченности в систематические занятия разными видами спорта. Необходимо расширить раздел «стрелковая подготовка» в школьном курсе начальной физической подготовки. Диктуется необходимость создание в соответствующих спортивных структурах возможности обучения школьников плаванию на бесплатной или льготной основе.

### ***Տեղեկություններ հեղինակների մասին***

Հենրիկ Գևորգի Թումանյան՝ մ.գ.թ., Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի պրոֆեսոր, Երևան, Հայաստան,  
E.mail: [h.tumanyan@ysu.am](mailto:h.tumanyan@ysu.am)

Վլադիմիր Միխայելի Ավագիմյանց, Երևանի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոնի պրոֆեսոր, Երևան, Հայաստան,  
E.mail: [v.avagimyants@ysu.am](mailto:v.avagimyants@ysu.am)

Լուսինե Ազատի Մելքոնյան՝ դասախոս, Երևանի պետական համալսարանի, ֆիզիկական դաստիարակության և սպորտի ամբիոն, Երևան, Հայաստան,  
E.mail: [v.avagimyants@ysu.am](mailto:v.avagimyants@ysu.am)

### ***Information about the authors***

Henrik Gevork Tumanyan - Candidate of Pedagogical Sciences, Professor of the Chair of Physical Education and Sports, Yerevan State University, Yerevan, Armenia

E-mail: [h.tumanyan@ysu.am](mailto:h.tumanyan@ysu.am)

Vladimir Mikhail Avagimyants - Professor, Head of the Chair of Physical Education and Sports, Yerevan State University, Yerevan, Armenia,

E-mail: [v.avagimyants@ysu.am](mailto:v.avagimyants@ysu.am)

Lusine Azat Melkonyan - Lecturer, Chair of Physical Education and Sports, Yerevan State University, Yerevan, Armenia,

E-mail: [l.melqonyan@ysu.am](mailto:l.melqonyan@ysu.am)

Հոդվածն ընդունվել է 20.06.2023-ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 21.06.2023-ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ.Ղազարյան

ՀՏԴ 159.9

DOI: 10.53068/25792997-2023.2.9-135

**ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻ ՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*Կ. Ժ. Հակոբյան*

*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Մասնագիտական և հուզական այրումներ, դեպերտոնալիզացիա, քրոնիկ սթրես, տեսական վերլուծություն, անհատական առանձնահատկություններ:

**Հետազոտության արդիականություն:** Մասնագիտական այրումը մեծ տարածում ունեցող ֆիզիկական, հուզական և հոգեկան հյուսվածությամբ բնութագրվող ֆենոմեն է, որը շարունակում է գրավել գիտական հանրության ուշադրությունը: Այրում գիտական հասկացության վերաբերյալ լայնածավալ մի շարք հետազոտություններ են իրականացվել մի շարք տեսություններ փաստում են, որ դրա զարգացումը կապված է քրոնիկ սթրեսի և աշխատանքային միջավայրում համապատասխան աջակցության բացակայության հետ:

Ժամանակակից աշխարհում, տնտեսական և տեխնոլոգիական առաջընթացով պայմանավորված, աշխատանքային գործունեության բոլոր ոլորտներում մրցակցությունը մեծացել է: Աշխատակիցների կողմից բազմաթիվ գործառույթների

սեղմ ժամկետներում կատարելը առաջ է բերում մի շարք հոգեֆիզիոլոգիական փոփոխություններ, որոնք բացասաբար են անդրադառնում աշխատունակության և մասնագիտական գործունեության վրա՝ ի վերջո նպաստելով մասնագիտական այրման առաջացմանը:

Չնայած այն հանգամանքին, որ մասնագիտական այրման հիմնախնդիրն ուսումնասիրվել է տարբեր մասնագետների կողմից (Ք. Մասլաչ, Լ. Մորրո, Մ. Լեյթեր, Վ. Շաուֆելի և այլն) և տարբեր գիտական հայեցակարգերի շրջանակներում՝ այս երևույթի հետազոտական դաշտը դեռևս մնում է բարդ և բազմակողմանի: Մինչ հետազոտողները ձգտում են մշակել այրման կանխատեսման և կանխարգելմանն ուղղված մեթոդներ և ռազմավարություններ, հեղինակների միջև չկա կոնսենսուս այս ֆենոմենի ճշգրիտ սահմանման, պատճառների և կանխարգելման մեթոդների վերաբերյալ: Հետևաբար, մասնագիտական գրականության մեջ հանդիպում են բազմաթիվ հասկա-

ցություններ և մոդելներ, որոնցից յուրաքանչյուրն առաջարկում է այրման պատճառների տարբեր մեկնաբանություններ: Հաշվի առնելով մասնագիտական այրման տարածվածությունը և աշխատանքային արդյունավետության վրա դրա զգալի ազդեցությունը՝ այս ոլորտում առկա մոդելների համակարգումը, վերլուծությունը, ինչպես նաև նոր տեսությունների և մոդելների մշակումը դեռևս կարևոր և արդիական են ժամանակակից գիտական դիսկուրսում:

**Հետազոտության նպատակն է՝** վերլուծել մասնագիտական այրման հիմնախնդիրները, բաղադրիչներն ու ախտանշանները, որոնք փաստագրված են գիտական և մեթոդական գրականությունում:

#### **Հետազոտության խնդիրներն են՝**

- Հետազոտել «այրում» ֆենոմենի պատմական զարգացումն ու էվոլյուցիան՝ պարզելով դրա ծագումն ու հիմնական իրադարձությունները գիտական ընդունման ընթացքում:

- Վերլուծել հիմնական տեսությունները, որոնք բացատրում են այրման պատճառները, դինամիկան և հետևանքները՝ ապահովելով տեսությունների վերաբերյալ համապարփակ պատկերացում:

- Տեսական վերլուծության ենթարկել այրման տարբեր մոդելները՝ բացահայտելու այրումը հայեցակարգելու և

ուսումնասիրելու համար օգտագործվող տարբեր տեսակետներն ու մոտեցումները:

- Գրական աղբյուրների վերլուծությամբ դուրս բերել այրման հիմնական բաղադրիչները՝ այս ֆենոմենի բարդ բնույթի և մարդկանց վրա դրա ազդեցության մասին:

**Հետազոտության մեթոդն է՝** գիտական և մեթոդական գրականության համակարգային վերլուծություն:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** «Մասնագիտական այրման» ֆենոմենի զարգացման պատմական ակնարկ: Մասնագիտական այրման վերաբերյալ գիտական հետազոտությունները կատարվել են մի քանի տասնամյաների ընթացքում: Այրման հայեցակարգն առաջին անգամ քննարկվել է 1970-ականներին, երբ այն հիմնականում ուսումնասիրվում էր սոցիալական մասնագիտությունների համատեքստում, ինչպիսիք են՝ առողջապահությունը և սոցիալական աշխատանքը: Նախկինում այրումը հաճախ նկարագրվում էր՝ որպես ֆիզիկական, էմոցիոնալ և մտավոր հյուծվածության վիճակ, որը զգացվում էր պատասխանատու և էմոցիոնալ «քամող դիրքերում» աշխատող մասնագետների կողմից:

1974 թվականին Հերբերտ Ֆրոյդենբերգերն օգտագործել է «այրում» (“burn-

nout”) տերմինը՝ նկարագրելու հյուժվածության և հիասթափության վիճակը, որն ապրում է բարձր սթրեսի տակ աշխատող մարդը, ինչպիսիք են՝ բուժաշխատողները և կամավորները: Ֆրոյդենբերգերի աշխատանքը հիմք հանդիսացավ հետագա հետազոտությունների համար և հետաքրքրություն առաջացրեց այրման պատճառների ու հետևանքների վերաբերյալ [1]:

1980-90-ականների ընթացքում հետազոտողները շարունակել են ուսումնասիրել այրումը և ընդլայնել դրա կիրառումը մի շարք մասնագիտական միջավայրերում, ներառյալ կրթությունը, իրավապահ մարմինները և այլ կազմակերպություններ: Այս ժամանակահատվածում Քրիստին Մասլաչը՝ ոլորտի նշանավոր հետազոտողը, մշակել է «Maslach Burnout Inventory»-ը (MBI)՝ այրումը չափելու լայնորեն օգտագործվող գործիքը: Մասլաչի հետազոտությունը բացահայտել է հուզական հյուժվածությունը, ապանձնավորումը և անձնական նվաճումների նվազեցումը՝ որպես այրման հիմնական բաղադրիչներ [3]:

20-րդ դարի վերջին այրման ուսումնասիրությունը մեծ թափ ստացավ, քանի որ հետազոտողները փորձում էին բացահայտել ռիսկի գործոնները և մշակել հնարավոր միջամտությունների ռազմավարություններ: Այդ շրջանում հետազոտութ-

յունները կենտրոնացած էին կազմակերպչական գործոնների վրա, ինչպիսիք են՝ մեծ ծանրաբեռնվածությունը, վերահսկողության բացակայությունը և անբավարար սոցիալական աջակցությունը, որոնք նպաստում են այրմանը:

21-րդ դարում այրումը ներկայացվում է՝ որպես հանրային առողջության հիմնական խնդիր: Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) 2019 թվականին այրումը ներառել է հիվանդությունների միջազգային դասակարգման (ICD-11) 11-րդ վերանայման մեջ: Առողջապահության միջազգային առաջատար կազմակերպության այս ճանաչումն ավելի ամրապնդեց այրման կարգավիճակը՝ որպես խնդիր, որն ամբողջ աշխարհում բացասական ազդեցություն է ունենում մարդկանց և կազմակերպությունների վրա [11]:

Ընդհանուր առմամբ, այրման հետազոտության պատմական հետազոտողը ցույց է տալիս այս երևույթի էվոլյուցիան սոցիալական ծառայությունների ոլորտի մասնագիտությունների վրա հիմնված հայեցակարգերից մինչև լայնորեն տարածված և ուսումնասիրված երևույթ տարբեր մասնագիտական ոլորտներում՝ մեծացող ուշադրությամբ այրման բացասական հետևանքների կանխարգելման միջոցների մշակման և հաղթահարման վրա: Մասնագիտական այրման շարունակական ուսումնասիրությունն ընդգծում է դրա

մնայուն արդիականությունը և հետագա հետազոտությունների և միջամտությունների անհրաժեշտությունը՝ այս համապարփակ և բազմակողմանի խնդրի լուծման նպատակով:

**Մասնագիտական այրման հիմնական տեսությունների և մոդելների վերլուծություն:** «Burnout» (այրում) տերմինն առաջին անգամ օգտագործել է Գ. Ֆրեյդենբերգը, սակայն ռուսալեզու մասնագիտական գրականությունում առկա են այս երևույթն անվանող երկու տերմիններ՝ «հուզական այրում» և «մասնագիտական այրում»։ այն է հոգեկան խնդիրների համալիր, որոնք կապված են մասնագիտական գործունեության հետ: Խորհրդային հոգեբանության մեջ առաջին անգամ այս խնդրին անդրադարձել է Բ.Անանևը: Վերջինս կիրառել է «հուզական այրում» տերմինը, որպեսզի բացահայտի «մարդմարդ» մասնագիտությունների տիպի անձանց մոտ միջանձնային հարաբերությունների բացասական ազդեցությունը: Հետագայում աշխատակազմի հետ իրականացրած հետազոտություններում լայնորեն կիրառվել է նաև «staff burnout» (աշխատակիցների այրման սինդրոմ) հասկացությունը, որը վերաբերում էր հուզական հյուծվածության վիճակին՝ մասնագիտական գործունեության արդյունքում [2]:

Այրման մասին համապարփակ պատկերացում կազմելու համար հետազոտողներն առաջարկել են տարբեր տեսություններ, որոնք ուսումնասիրում են դրա պատճառներն ու մեխանիզմները: Այդ տեսությունները կարելի է պայմանականորեն դասակարգել՝ հիմնվելով այրման վրա ազդող գերիշխող գործոնների վրա՝ միջավայրի, (աշխատանքային պայմաններ (օբյեկտիվ)), անձնական պայմաններ (սուբյեկտիվ) և համալիր հայեցակարգերը, որոնք հաշվի են առնում երկու գործոնները:

Օբյեկտիվ տեսությունները կենտրոնանում են շրջակա միջավայրի և աշխատանքային պայմանների վրա՝ որպես այրման հիմնական նախապայմանների: Առաջին համապարփակ տեսական պատկերացումներն այրման ֆենոմենի վերաբերյալ տվել են Բ. Մասլաչը և Մ.Լեյթերը, որոնք առանձնատուկ նշում էին այն հանգամանքը, որ այրման վրա աշխատանքային փոփոխականների (բեռնվածություն, վերահսկողություն, պարզատրում, համայնք, արդարություն և արժեքներ) ազդեցության ավելի շատ ապացույցներ կան, քան անձնային փոփոխականների: Նրանք սահմանում էին այրումը՝ որպես աշխատավայրում հյուծվածության, ցինիզմի և անարդյունավետության հոգեբանական համախտանիշ [8]: Մասլախի և Լեյթերի տեսական դրույթները հիմք են հանդիսացել այրման մի

շարք հայեցակարգերի և մոդելների համար:

Համաձայն Ռ. Կարասելի պահանջարկ-վերահսկողություն մոդելի (The Demands-Control Model)՝ այրումը աշխատանքային բարձր պահանջների և վերահսկման ցածր մակարդակների անհամապատասխանության արդյունք է: Այս անհավասարակշռությունը հանգեցնում է քրոնիկ սթրեսի և, ի վերջո, այրման [7]: Աշխատանքի պահանջներ-ռեսուրսների մոդելը (The Job Demands-Resources Model – JD-R)՝ աշխատանքային պայմաններին առնչվող մեկ այլ տեսություն է, որը ենթադրում է՝ այրումը առաջանում է աշխատանքի պահանջների և այդ պահանջները բավարարելու համար հասանելի ռեսուրսների միջև անհավասարակշռությունից: Այս մոդելն ընդգծում է ինչպես աշխատանքի պահանջները (ինչպիսիք են՝ ֆիզիկական ծանրաբեռնվածությունը, ժամանակային սահմանափակումները, միջավայրը, հաճախորդների հետ շփումը, հերթափոխային աշխատանքը), այնպես էլ աշխատանքային ռեսուրսներն (ինչպիսիք են՝ հետադարձ կապը, խրախուսումները, աշխատանքի կառավարումը, մասնակցություն կամ ներգրավվածությունը, խորհրդատուների աջակցությունը) այրման զարգացման գործում: Այն ենթադրում է՝ այրումը՝ մարդու աշխատանքի և ստացված արդյունքի միջև անհավասարակշռության հետևանք է, ինչը

հանգեցնում է հուսահատության և անօգնականության զգացումների [10]:

Որպես արտաքին գործոններ՝ աշխատանքային պայմաններից բացի կարելի է դիտարկել նաև սոցիալական գործոնները, որոնք ուսումնասիրվում են սոցիալապես առաջացած այրման մոդելի շրջանակներում: Հիմնվելով Հատֆիլդի հուզական վարակի տեսության և Ֆեստինգերի սոցիալական համեմատության տեսության վրա՝ Բակերը առաջարկեց նոր մոտեցում, որի համաձայն՝ աշխատակիցները կարող են իրենց գործընկերներից ստանալ այրման փոխանցված և ինքնաբերաբար ընդունել դրանք: Այսպես՝ թիմային այրումն անմիջական կապ ունի առանձին աշխատողների այրման հետ, բայց առանձին աշխատողների այրման վրա ազդում են նաև նրանց աշխատանքային պայմանները (ծանրաբեռնվածություն և աշխատանքի ինքնավարություն) [5]:

Մյուս կողմից, սուբյեկտիվ տեսություններն ընդգծում են անձնական պայմանները և անհատական փորձառությունները՝ որպես այրման որոշիչ գործոններ: Այսպես՝ ռեսուրսների պահպանման (COR) մոդելը շեշտադրում է անձնային ապրումը՝ ընդգծելով, որ այրումը տեղի է ունենում, երբ մարդիկ վտանգված են զգում աշխատանքի հետ կապված այն ռեսուրսների կորստից կամ բացակայությունից, որոնք նրանք գնահատում են [6]:



Անձնային պայմանները դիտարկվում են՝ որպես այրման նախապայման նաև էկզիստենցիալ տեսակետի համաձայն, ըստ որի՝ այրման հիմնական պատճառը մարդկանց կարիքն է՝ հավատալու, որ իրենց կյանքը իմաստ ունի, որ այն, ինչ անում են, օգտակար և կարևոր է: Մարդիկ, որոնք աշխատանքային գործունեությունը սկսում են մոտիվացված, բարձր նպատակներով և ակնկալիքներով: Սակայն երբ զգում են, որ ծախսողվել են, իրենց աշխատանքն աննշան է, սկսում են իրենց անօգնական և անհույս զգալ և, ի վերջո, «այրվել» [9]:

Ինտեգրված մոտեցումները հաշվի են առնում այրումը հասկանալու և՛ սուբյեկտիվ, և՛ օբյեկտիվ ասպեկտները: Նման օրինակ է Մեյերի ընդլայնված այրման մոդելը, որտեղ օգտագործվում է ինտեգրված մոտեցում՝ դիտարկելով բազմաթիվ բաղադրիչների փոխազդեցությունը, ներառյալ ամրապնդումը, արդյունքը և կատարողականի ակնկալիքները որոշակի համատեքստում [4]:

Այսպիսով՝ այրման տեսությունների դասակարգումն օգնում է մեզ դիտարկել տարբեր գործոններ, որոնք նպաստում են այրման առաջացմանը և վերլուծել՝ ինչպես են դրանք փոխազդում: Օբյեկտիվ տեսություններն ընդգծում են շրջակա միջավայրի և աշխատանքային պայմանների կարևորությունը, մինչդեռ սուբ-

յեկտիվ տեսությունները շեշտում են անհատական հատկանիշներն ու ընկալումները: Ինտեգրված հայեցակարգերը հաշվի են առնում ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ ասպեկտները՝ ապահովելով այրման ավելի ամբողջական պատկերացում, որը ներառում է անձնական հատկանիշները, կազմակերպական գործոնները և դրանց բարդ փոխազդեցությունները:

**Եզրակացություն:** Գիտամեթոդական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այրումը բարդ երևույթ է, որն ազդում է աշխատակիցների վրա՝ վնասակար հետևանքներ ունենալով նրանց բարեկեցության և կազմակերպչական գործունեության վրա: Այրման պատճառներն ու մեխանիզմները հասկանալու համար այս հիմնահարցին վերաբերող հիմնական տեսություններն ու մոդելները կարելի է դասակարգել սուբյեկտիվ՝ անձնային պայմանների վրա հիմնված տեսությունների, օբյեկտիվ՝ աշխատանքային պայմանների վրա հիմնված տեսությունների և համալիր դիտարկման տեսությունների: Սուբյեկտիվ տեսություններն ընդգծում են անհատական հատկանիշները, ընկալումները և ճանաչողական գործընթացները, որոնք նպաստում են այրմանը: Այս տեսություններն ընդգծում են անձային փոփոխականների դերը, ինչպիսիք են անհատականության գծերը և կոգնիտիվ պատկերացումները՝

այրման ձևավորման գործում: Մյուս կողմից, օբյեկտիվ տեսությունները շեշտում են աշխատանքային արտաքին գործոնները, որոնք նպաստում են այրմանը: Այս տեսությունները կենտրոնանում են աշխատանքի պահանջների, վերահսկողության, ռեսուրսների և աշխատանքի հետ կապված փոփոխականների ազդեցության վրա: Համալիր տեսությունները համատեղում են ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ ասպեկտները՝ ապահովելով այրման ավելի ամբողջական պատկերացում: Այս տեսությունները ճանաչում են անհատական հատկանիշների և աշխատանքային միջավայրի գործոնների միջև փոխհարաբերությունը՝ ընդգծելով այրմանը անդրադառնալիս և՛

անձնական որակները, և՛ կազմակերպչական գործոնները հաշվի առնելու կարևորությունը:

Այս տեսություններն ուսումնասիրելով և դասակարգելով՝ մենք կարող ենք զարգացնել այրման վերաբերյալ ամբողջական տեսակետ, որը ներառում է անձնական հատկանիշները, կազմակերպչական գործոնները և դրանց բարդ փոխազդեցությունները: Այս համապարփակ ըմբռնումը կարևոր նշանակություն ունի աշխատավայրում այրումը կանխելու և կառավարելու արդյունավետ ռազմավարությունների և միջամտությունների մշակման համար:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Голубев А. В., Теоретические подходы к изучению синдрома «эмоционального выгорания». Молодежь и общество: проблемы и перспективы развития: материалы XII Международной научно-практической конференции студентов, магистров, стр. 390, 2022.
2. Князев В. Н., & Ремизова К. А. Современное состояние проблемы эмоционального выгорания в психологической науке. Вестник университета, стр.181-189, 2017.
3. Матюшкина Е. Я., Рой А. П., Рахманина, А. А., & Холмогорова А. Б. Профессиональный стресс и профессиональное выгорание у медицинских работников. Современная зарубежная психология, 9(1), стр.39-49, 2020.
4. Мелоян А. Э., Погребная А. А., Кохан С. Т., & Гунчин Б. Эмоциональное выгорание в профессиональной деятельности учителей школ-интернатов для детей с нарушениями интеллекта. : монография / Забайкальский государственный университет. – Чита : ЗабГУ, стр. 8-10, 2020.

5. Chirico F.. Job stress models for predicting burnout syndrome: a review. *Annali dell'Istituto superiore di sanita*, 52(3), 443-456, 2016.
6. Halbesleben J. R. B., & Buckley M. R. Burnout in Organizational Life. *Journal of Management*, 30(6), 859-879, 2004.
7. Karasek R. A.. Job demands, job decision latitude, and mental strain: Implications for job redesign. *Administrative Science Quarterly*, 24(2), 285-308, 1979.
8. Maslach C., & Leiter, M. P. The truth about burnout: How organizations cause personal stress and what you can do about it. San Francisco, CA: Jossey-Bass, 1997.
9. Pines A. M., & Keinan, G.. Stress and burnout: The significant difference. *Personality and Individual Differences*, 39(3), 625-635. 2005.
Furthermore, the ANOVA revealed a significant effect of social environment influence on tapping test results ( $F = 2.974$ ,  $p = .039$ ). This result suggests that the perception of the social environment plays a role in the participants' performance during the tapping test.

In addition to the significant effect of social environment influence on tapping test results, correlation analysis further explored the relationship between performance levels and the perception of the social environment. The results indicated a correlation, indicating that higher performance levels were associated with a lower perception of the influence of the social environment on the participants' performance. This result highlights the importance of considering the social context in optimizing performance outcomes in sports and physical tasks for adolescent judokas [2].

Creating a positive and supportive social environment within judo training and competition settings is crucial for enhancing performance outcomes among adolescent judokas. By fostering a supportive network of interpersonal relationship, athletes can benefit from emotional support, encouragement, and a sense of belonging, which can contribute to their confidence and motivation. This positive social environment can serve as a resource for athletes, empowering them to overcome challenges, seek guidance, and optimize their performance potential.

Overall, the significant influence of social environment perception on tapping test results, coupled with the positive correlation with performance levels, emphasizes the critical role of the social context in shaping the performance



outcomes of adolescent judokas. Coaches, trainers, and stakeholders should prioritize the development of a positive team culture that nurtures social support, open communication, and a collaborative atmosphere. By doing so, they can create an environment that promotes athletes' well-being, fosters their performance development, and maximizes their potential for success.

It is important to note that none of the other factors included in the analysis showed a significant influence on performance levels or tapping test results. Factors such as subjective well-being and other subscales did not show statistically significant differences in relation to these parameters within the scope of this study.

To sum up, the results of this study shed light on the relationships between performance levels, subjective well-being, and its subscales in adolescent judokas. The results contribute to our understanding of the factors influencing performance and well-being in this population. Future research could further explore these associations and delve into additional factors that may influence the performance and well-being of adolescent judokas.

**Conclusion:** The results provide important insights into the factors influencing performance and well-being in this population. The main conclusions of the study are as follows:

1. The educational and philosophical structure of judo plays a significant role in

promoting high levels of subjective well-being among adolescent judokas. Judo, as sport, places emphasis on the holistic development of the mind, spirit, and emotional stability. Training judo, young judokas have the opportunity to cultivate a sense of well-being, characterized by lower levels of anxiety and distraction, as well as a reduced perception of social influence on their performance.

2. The correlation analysis reveals that higher performance levels in judo are associated with lower levels of anxiety, distraction, and the perception of external influences. This suggests that psychological factors, such as emotional stability and focus, play a crucial role in optimizing performance. Additionally, higher subjective well-being is linked to better motor performance, indicating the importance of psychological well-being in physical abilities. These findings highlight the multifaceted impact of judo on the psychological well-being and motor abilities of adolescent judokas.

3. The analysis of variance (ANOVA) and correlation analysis demonstrated significant relationship between mood fluctuations, social environment influence, and performance levels among adolescent judokas. The results suggest that maintaining emotional stability and lower levels of mood fluctuations are important factors associated with higher performance outcomes. Additionally, the perception of the social environment was found to impact tapping

test results and showed a correlation with performance, indicating that minimizing the influence of the social environment is crucial for achieving higher performance levels.

In conclusion, the results of this study highlight the importance of judo trainings in promoting subjective well-being among adolescent judokas, particularly by reducing mood fluctuations, psycho-emotional symptoms, and the influence of the social environment. Engaging in judo can contribute to

the development of emotional stability, resilience to social influences, and a decrease in anxiety and distraction, ultimately leading to higher performance levels in adolescent judo. Based on these results, it is recommended that judo training programs incorporate strategies to enhance emotional regulation and create a supportive social environment to optimize the well-being and performance of adolescent judokas.

*The work was supported by the NAS RA within the framework of the “Young Scientists’ Support Program” under the code 22-YSSS-029 and by the Science Committee of the MESCS RA, in the frames of the research project No 21T-5C071.*

### References

1. Fukuda, D. H., Stout, J. R., Burris, P. M., & Fukuda, R. S. Judo for children and adolescents: Benefits of combat sports. *Strength & Conditioning Journal*, 2011, 33(6), pp. 60-63.
2. Knight, C. J., Harwood, C. G., & Sellars, P. A. Supporting adolescent athletes' dual careers: The role of an athlete's social support network. *Psychology of Sport and Exercise*, 2018, Vol. 38, pp. 137-147.
3. Matsumoto, D., & Konno, J. The relationship between adolescents' participation in judo, quality of life, and life satisfaction. *Research Journal of Budo*, 2005 38(1), pp. 13-26.
4. Ouergui, I., Delleli, S., Chtourou, H., Selmi, O., Bouassida, A., Bouhlel, E., & Franchini, E. Diurnal Variation of specific tests' performance and related psychological aspects in young judo athletes. *Research Quarterly for Exercise and Sport*, 2022 – pp. 1-11.
5. Trajković, N., Mitić, P. M., Barić, R., & Bogataj, Š. Effects of physical activity on psychological well-being. *Frontiers in Psychology*, 2023, 14, 1121976.
6. Хитарян Д. С., Степанян Л. С. Психологические паттерны влияния дзюдо на проявления буллинга у подростков. // Спорт, человек, здоровье: XI

Международный конгресс, 26–28 апреля 2023 года, Санкт-Петербург, Россия:  
материалы конгресса – стр. 295-297

**ԴԵՌԱՀԱՍ ԶՅՈՒԴՅՈՒՄՆԵՐԻ ՄԱՐԶԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ  
ԲԱՐՁՐԱՅՈՒՄ. ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՇԱՐԺՈՂԱԿԱՆ  
ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՐԸ**

*Գ. Ա. Լալայան, Ա. Վ. Ավետիսյան, Մ. Մ. Խաչատրյան  
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**ԱՄՓՈՓԱԳԻՐ**

**Առանցքային բառեր:** Սուբյեկտիվ բարեկեցություն, հոգեշարժողական ընդունակություններ, մարզական արդյունավետություն, դեռահաս ձյուդոյիստներ, հմտությունների զարգացում, մարտարվեստ, հոգեբանական գործոններ, հուզական կայունություն:

**Հետազոտության արդիականություն:** Դեռահասության շրջանում սպորտային գործունեությամբ զբաղվելը նշանակալի է ֆիզիկական, ճանաչողական և հոգեբուցիալական զարգացման համար: Այս ուսումնասիրությունն ուղղված է դեռահաս ձյուդոյիստների սուբյեկտիվ բարեկեցության, հոգեշարժողական հմտությունների և մարզական կատարողականի ուսումնասիրմանը: Նման հարաբերակցությունների դուրսբերումը կնպաստի դեռահաս ձյուդոյիստների ընդհանուր մարզական արդյունավետության օպտիմալացման միջամտությունների ծրագրի մշակմանը:

**Հետազոտության նպատակն է՝** ուսումնասիրել դեռահաս ձյուդոյիստների շրջանում սուբյեկտիվ բարեկեցության, շարժողական ընդունակությունների և կատարողականի միջև կապը:

**Հետազոտության մեթոդներ և կազմակերպում:** Հետազոտությանը մասնակցել են 10-ից 16 տարեկան 23 դեռահաս ձյուդոյիստներ, որոնք «Ձեյթուն» մարզական ակումբի սաներ են: Նրանց հետ անցկացվել է հոգեբանական թեստավորում («Սուբյեկտիվ բարեկեցության սանդղակ», Պերուե-Բադու, Սոկոլովի ադապտացմամբ)՝ թեպիճ թեստ և մարզական կատարողականի գնահատում՝ հիմնվելով քյուերի մակարդակի վրա:

**Ստացված արդյունքների վերլուծություն:** Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ դեռահաս ձյուդոյիստների կատարողականի մակարդակի և հոգեբանական գործոնների միջև զգալի կապ կա: Մասնավորապես, կատարողականի ավելի բարձր մակարդակները փոխկապակցված են անհանգստության, ցրվածության և արտաքին ազդեցությունների ընկալման ավելի ցածր մակարդակների հետ: Արդյունքները

նաև դրական հարաբերակցություն են ցույց տվել սուբյեկտիվ բարեկեցության և տեպինգ թեստի արդյունքների միջև, ինչը ենթադրում է, որ սուբյեկտիվ բարեկեցության բարձր միավորները կապված են ավելի լավ ֆիզիկական ակտիվության հետ: Բացի այդ, պարզվել է, որ տրամադրության փոփոխությունները զգալի ազդեցություն են ունենում կատարողականի մակարդակի վրա, իսկ սոցիալական միջավայրի ընկալումներն ընդգծված ազդեցություն են ունենում թեստի գնահատականների վրա:

**Համառոտ եզրակացություն:** Այսպիսով՝ ճյուղոյի մարզումները դրական ազդեցություն ունեն սուբյեկտիվ բարեկեցության, մասնավորապես՝ տրամադրության տատանումների, սոցիալական միջավայրի ազդեցության և հոգեհուզական ախտանիշերի դրևստրման վրա: Ճյուղոյի մարզումները նպաստում են տրամադրության կայունացմանը, արտաքին ներգործությունների նկատմամբ կայունությանը և անհանգրստության և ցրվածության նվազմանը՝ դեռահաս ճյուղոյիստների շրջանում: Խորհուրդ է տրվում ճյուղոյի մարզական ծրագրերում առաջնահերթություն տալ հուզական կարգավորման ռազմավարությունների մշակմանը և աջակցող սոցիալական միջավայր ստեղծելուն՝ դեռահաս ճյուղոյիստների բարեկեցությունն ու կատարողականը օպտիմալացնելու նպատակով:

## ПОВЫШЕНИЕ СПОРТИВНОЙ РЕЗУЛЬТАТИВНОСТИ У ПОДРОСТКОВ ДЗЮДОИСТОВ: РОЛЬ СУБЪЕКТИВНОГО БЛАГОПОЛУЧИЯ И ПСИХОМОТОРНЫХ СПОСОБНОСТЕЙ

*Г. А. Лалаян, А. В. Аветисян, М. М. Хачатрян  
Государственный институт физической культуры  
и спорта Армении, Ереван, Армения*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** субъективное благополучие, психомоторные способности, спортивная результативность, подростки - дзюдоисты, развитие навыков, единоборства, психологические факторы, эмоциональная устойчивость.

**Актуальность исследования.** Занятия спортом в подростковом возрасте важны для физического, когнитивного и психосоциального развития. Это исследование посвящено субъективному благополучию, психомоторным навыкам и спортивным результатам подростков, занимающихся дзюдо. Понимание этих взаимосвязей поможет разработать программы и мероприятия, способствующие повышению общих спортивных результатов среди подростков-дзюдоистов.

**Цель исследования** - изучить взаимосвязь между субъективным благополучием, психомоторными навыками и спортивными достижениями среди подростков, занимающихся дзюдо.

**Методы и организация исследования.** В исследовании приняли участие 23 юных дзюдоиста в возрасте от 10 до 16 лет, являющихся воспитанниками спортивного клуба «Зейтун». С ними были проведены психологическое тестирование (Шкала субъективного самочувствия, Перуэ-Баду, адаптация Соколова), теппинг-тест и оценка спортивной результативности по кю уровню. Исследование проводилось в июне-июле 2023 года в Спорт КАБ научно-исследовательском центре Государственного института физической культуры и спорта Армении.

**Анализ полученных результатов.** Результаты исследования показали наличие значимой связи между уровнем спортивной производительности и психологическими факторами у подростков-дзюдоистов. В частности, более высокие уровни производительности были связаны с более низкими уровнями тревожности, рассеянности и восприятия внешних факторов. Результаты также указывают на положительную корреляцию между субъективным благополучием и результатами теппинг теста, что свидетельствует о связи более высоких показателей субъективного благополучия с большей физической активностью. Кроме того, выявлено значительное влияние изменений в настроении на уровень производительности и восприятия социальной среды на результаты теппинг теста.

**Краткие выводы.** Таким образом, занятия дзюдо положительно влияют на субъективное благополучие, особенно в контексте перепадов настроения, влияния социальной среды и проявления психоэмоциональных симптомов. Занятия дзюдо оказывают положительное влияние на эмоциональное состояние подростков-дзюдоистов, способствуя стабилизации настроения, повышению устойчивости к внешним воздействиям, уменьшению тревожности и рассеянности. Рекомендуется уделять приоритетное внимание разработке стратегий эмоциональной регуляции и созданию благоприятной социальной среды в спортивных программах по дзюдо, чтобы оптимизировать самочувствие и спортивную результативность подростков-дзюдоистов.

### ***Տեղեկություններ հեղինակների մասին***

Գայանե Արմենի Լալայան՝ Բժշկականսարանական գիտությունների ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: [gayane.lalayan@sportedu.am](mailto:gayane.lalayan@sportedu.am)

<https://orcid.org/0000-0003-2049-2615>

Արման Վաչագանի Ավետիսյան՝ ՖԴՏ, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E-mail: [arman.avetisyan@sportedu.am](mailto:arman.avetisyan@sportedu.am), ORCID 0000-0002-0303-3612

Մխիթար Մուշեղի Խաչատրյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E-mail: [mkhitar.khachatryan@sportedu.am](mailto:mkhitar.khachatryan@sportedu.am)

### **Information about the authors**

**Gayane Lalayan**, PhD student of the Chair of Medical and Biological Sciences, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [gayane.lalayan@sportedu.am](mailto:gayane.lalayan@sportedu.am) <https://orcid.org/0000-0003-2049-2615>

**Arman Avetisyan**, PhD student of the Chair of Theory of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E-mail: [arman.avetisyan@sportedu.am](mailto:arman.avetisyan@sportedu.am) , ORCID 0000-0002-0303-3612

**Mkhitar Khachatryan**, Lecturer of the Chair of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia,

E-mail: [mkhitar.khachatryan@sportedu.am](mailto:mkhitar.khachatryan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 10.05.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 11.05.2023–ին:

Գրախոս՝ Կ.Գ.Թ., դոցենտ Լ. Ստեփանյան

**ԲԱԺԻՆ 4. ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԲԺՇԿԱԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ**

ՀՏԴ 61.13058

DOI: 10.53068/25792997-2023.2.9-170

**ՈՉ ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԳԻՍՏՐՈՍՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ**

*Վ. Ա. Աբովյան, Գ. Լ. Նալբանդյան, Գ. Ռ. Ասցապրյան, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Ոչ վարակիչ հիվանդություններ, ռիսկի գործոններ, ծխամոլություն, ալկոհոլի օգտագործում, անառողջ սնուցում, ֆիզիկական թերակտիվություն:

**Հետազոտության արդիականություն:** Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ) փաստում է, որ ամեն տարի 41 միլիոն մարդ մահանում է քրոնիկական ոչ վարակիչ հիվանդություններից, ընդ որում՝ 17 միլիոնը մահանում է մինչև 70 տարեկանը: Այս վաղաժամ մահերի 86%-ը տեղի է ունենում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում [8]: Աշխարհի ամենամեծ մարդասպանը սրտի իշեմիկ հիվանդությունն է, որը պատասխանատու է աշխարհում մահացությունների 16%-ի համար: Կաթվածը և թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունը մահացության 2-րդ

և 3-րդ հիմնական պատճառներն են, որոնք պատասխանատու են ընդհանուր մահացությունների մոտավորապես 11%-ի և 6%-ի համար [9]:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2017 թվականի վիճակագրական տվյալների՝ Հայաստանի մեծահասակ ազգաբնակչության ընդհանուր մահացության տեսակարար կշռում քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունները կազմում են 80 %: Հայաստանի մեծահասակ ազգաբնակչության ընդհանուր մահացության տեսակարար կշռում առաջին տեղը գրավում են սրտանոթային հիվանդությունները, որոնց մասնաբաժինը կազմում է 48%: Երկրորդ տեղում չարորակ նորագոյացություններն են՝ 20,6%-ով, ապա հաջորդում են քրոնիկական թոքային հիվանդությունները՝ 6,6 % և շաքարային դիաբետը 4,8 % [6]:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետազոտությունները փաստում են, որ ազդելով ապրելապայի հիմնական վարքագծային ռիսկի գործոնների վրա, հնարավոր է ներգործել ոչ վարակիչ հիվանդությունների հիվանդացության և վաղաժամ մահվան ծավալների վրա: Ինչպես նաև հնարավոր է հասնել անհատական կենսաբանական չորս ռիսկի գործոնների բարելավմանը՝ մարմնի հավելյալ քաշ, զարկերակային արյան բարձր ճնշում, խանգարված ճարպային և ածխաջրային փոխանակություն:

Հայաստանի Հանրապետությունում 2000-2022 թվականներին իրականացվեցին բազմաթիվ հետազոտություններ, որոնք ընդգրկել են ինչպես առանձին վերցրած մեկ ռիսկի գործոնի, այնպես էլ մի քանի ռիսկի գործոնների տարածվածությունը ազգաբնակչության շրջանում [1,2,5]: Կատարված հետազոտությունների արդյունքների համեմատությունը վերջին տարիների տվյալների հետ փաստում են, որ ռիսկի գործոնները նվազման հակում չեն դրսևորում կամ առանձին դեպքերում առկա են աննշան տեղաշարժեր՝ դեպի նվազում, ինչը որևէ էական ազդեցություն չի թողնում հիվանդացության, հաշմանդամության և մահացության տարածվածության ցուցանիշների վրա:

« 15-ից բարձր տարիքի բնակչության շրջանում ռիսկի գործոնների

տարածվածության ուսումնասիրությունները և վերլուծություններն իրականացվել են Հայաստանի առողջապահության համակարգի գործունեության գնահատման (ԱՀԳԳ) 2007, 2009, 2012, 2016, 2021 թթ. հետազոտությունների շրջանակներում, որոնց տվյալներն արտացոլված են ԱՀԳԳ գնահատման ազգային զեկույցներում [2,3,4,7]:

2016 թ. ԱՀԳԳ ընտրանքային հետազոտության տվյալների համաձայն՝ Հայաստանի 15-ից բարձր տարիքի բնակչության շրջանում ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնները բավականին տարածված են և հետազոտություն տվյալներն ունեն հետևյալ տեսքը՝

- ավելցուկային քաշը և ճարպակալումը՝ 51.2%,
- ծխախոտի տարածվածությունը՝ 26.2%, ամեն օր ծխող տղամարդիկ՝ 53.4%, իսկ կանայք՝ 2.4%,
- օրական 20 գ. սպիրտին համարժեք ալկոհոլ օգտագործող տղամարդիկ՝ 16.3%,
- ֆիզիկական թերակտիվությունը՝ 13.9% [6]:

Համաձայն վերջին հետազոտության՝ ամեն օր ծխող տղամարդկանց քանակը 2022-ին կազմել է 53.2%, որը 2016-ի համեմատ ըստ էության չի փոխվել՝ 53.4% [3]: Նույնը վերաբերվում է նաև կանանց՝ 2022 և 2016 թվականներին ամեն օր



ծխող կանանց քանակը կազմել է համապատասխանաբար՝ 2.0% և 2.3%:

2022-ին, 2016 թ. համեմատ, Հայաստանում աճել է հավելյալ քաշ և ճարպակալում ունեցող անձանց քանակը՝ 51.2%-ից մինչև 55.1%: Այդ աճը տեղի է ունեցել ճարպակալում ունեցող անձանց քանակի աճի հետևանքով՝ 22.3%-ից մինչև 27.7%:

2022 թ. ֆիզիկապես թերակտիվ բնակչությունը Հայաստանում 18-64 տարեկանների խմբում կազմել է 17.3% [3]:

**Հետազոտության նպատակ և խնդիրներ:** Հետազոտության նպատակն է՝ բացահայտել քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրոսների շրջանում և տալ առաջարկներ ռիսկի գործոնների նվազեցման վերաբերյալ:

Հետազոտության խնդիրներն են:

1. Պարզել քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրատուրայում սովորող ուսանողների շրջանում:

2. Մշակել առաջարկներ ռիսկի գործոնների նվազեցման վերաբերյալ:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական

ինստիտուտում օգտագործելով՝ «CINDI- (Countrywide Integrated Noncommunicable Disease Intervention-ոչ վարակիչ հիվանդությունների համազգային ինտեգրացված միջամտություն) առողջության մոնիտորինգ»-ի հարցաշարի հենքի վրա ստեղծված և տեղայնացված մեր տարբերակը: Հարցմանը մասնակիցներին ընտրելու համար պարտադիր պայման է հանդիսացել 2022-23 թթ. ուսումնական տարում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրանտ լինելը: Հարցմանը մասնակցել է 83 մագիստրոս:

Հարցաշարի մեր տարբերակում ընդգրկված է 22 հարց, որից միայն 6-ն են պարունակում ընդհանուր տեղեկություններ, մյուսները վերաբերում են քրոնիկական ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոններին: Հարցաշարում ընդգրկված հարցերը խմբավորել ենք հետևյալ հիմնական բաժիններում՝ Ընդհանուր տեղեկություններ, Ծխամոլություն, Սնուցման առանձնահատկություններ, Ալկոհոլի օգտագործում, չարաշահում, Քաշ, հասակ և ֆիզիկական ակտիվություն: Բոլոր ցուցանիշները ներկայացվել են իրենց բացարձակ և հարաբերական հաճախականությամբ (թիվ և %):

Համաձայն մեր հետազոտության՝ **ծխող** համարվել է այն մարդը, որը կյանքի ընթացքում ծխել է առնվազն 100 գլանակ

և ծխում է ներկա դրությամբ: **Սնուցման** բաժնում ուշադրություն ենք դարձրել, թե ուսանողների որ մասն է անհրաժեշտ քանակությամբ միրգ և բանջարեղեն օգտագործում: Ըստ ԱՀԿ-ի՝ չափահաս մարդու համար անհրաժեշտ է օրական 400 մգ կամ ավելի չափաբաժին մրգերի և (կամ) բանջարեղենի օգտագործում: Այն գնահատվում է վերջին շաբաթվա ընթացքում մրգերի և բանջարեղենի օգտագործման հաշվառմամբ: **Ալկոհոլի օգտագործում** բաժնում հաշվի ենք առել վերջին մեկ ամսվա ընթացքում ալկոհոլի օգտագործումը և հաճախությունը: **Քաշ, հասակ և ֆիզիկական ակտիվություն** բաժնում գետնեղել ենք բոլոր հարցվածների քաշը և հասակը՝ համաձայն տվյալ պահին իրենց նշած տվյալների: Հավելյալ քաշի և գիրության դասակարգման համար օգտագործել ենք մարմնի զանգվածի ցուցանիշը՝ ՄՁՑ, որը որոշվել է՝ քաշը (կիլոգրամներով) բաժանելով հասակի (մետրերով) քառակուսու վրա (կգ/մ<sup>2</sup>): Մարմնի զանգվածի ցուցանիշի գնահատման համար կիրառել ենք ԱՀԿ-ի կողմից առաջարկված հետևյալ չափանիշները. թերի քաշ՝ ՄՁՑ < 18,5 կգ/մ<sup>2</sup>, նորմալ քաշ՝ 18,5 կգ/մ<sup>2</sup> < ՄՁՑ < 25 կգ/մ<sup>2</sup>, հավելյալ քաշ՝ 25 կգ/մ<sup>2</sup> < ՄՁՑ < 30 կգ/մ<sup>2</sup>, ճարպակալում՝ 30 կգ/մ<sup>2</sup> < ՄՁՑ: Ֆիզիկապես ակտիվ համարվել են նրանք, ովքեր պատասխանել են, որ զբաղվում են ծանր

կամ չափավոր ֆիզիկական ակտիվությամբ՝ շաբաթը 5 օրից ոչ պակաս, նվազագույնը 30 րոպե տևողությամբ կամ քայլում են օրը 30-ից 60 րոպե:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Հարցվածների թվաքանակը ըստ տարիքային խմբերի, սեռի, կրթության ձևի (առկա, հեռակա), զբաղվածության և աշխատանքային ոլորտի, ընտանեկան կարգավիճակի՝ ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

Համաձայն 1-ին աղյուսակի՝ հարցման մասնակիցների 75 %-ը (n=62) 20-30 տարեկան են, իսկ 17 %-ը (n=14)՝ 31-40 տարեկան: Հետազոտության մասնակիցների միջին տարիքը 27.5 տարին է, ընդ որում՝ հեռակա բաժնի մագիստրոսների համար միջին տարիքը համապատասխանում է 32 տարեկանին, իսկ առկա բաժնում՝ 23 տարեկանին: Ինչպես երևում է 1-ին աղյուսակից, հարցվածների 35%-ը (n=29) իգական սեռի և 65 %-ը (n=54) արական սեռի ներկայացուցիչներ են: Հարցման մասնակիցների 33 %-ը (n=27) աշխատում է գրասենյակում կամ զբաղված է մտավոր աշխատանք պահանջող ծառայությունների ոլորտում, իսկ հարցվածների 38 %-ը (n=32) աշխատում են առողջապահական տարբեր հաստատություններում (հիվանդանոցներ, վերականգնողական կենտրոններ, պոլիկլինիկա, առողջության կենտրոններ) և ֆիթնես ակումբներում: Ընդ որում՝ հեռակա

բաժնի ուսանողների մեծամասնությունը՝  
63 %-ը (n=26) հիմնականում զբաղված է  
այս ոլորտում:

## Աղյուսակ 1

**Հեղազոտության մասնակիցների նկարագրական բնութագրերը (N = 83) \***

Տարիքային խմբեր	Փոփոխական արժեք
20-30	62 (75 %)
31-40	14 (17 %)
41-50	6 (7 %)
51-60	1 (1 %)
Սեռը՝	-
➤ արական,	54 (65 %)
➤ իգական	29 (35 %)
Կրթության ձևը՝	-
➤ առկա,	42 (51 %)
➤ հեռակա	41 (49 %)
Զբաղվածությունը և աշխատանքային ոլորտը՝	-
➤ գյուղատնտեսություն,	3 (4 %)
➤ արդյունաբերություն, շինարարություն,	2 (2 %)
➤ գրասենյակային աշխատանք, մտավոր աշխատանք, ծառայություններ,	27 (33%)
➤ ինքնազբաղված,	4 (5 %)
➤ առողջապահական կենտրոն կամ ֆիթնես ակումբ,	32 (38 %)
➤ չի աշխատում	15 (18 %)
Ընտանեկան կարգավիճակ՝	-
➤ ամուսնացած է կամ ունի մշտական զուգրնկեր,	24 (29 %)
➤ ամուրի/չամուսնացած,	53 (64 %)
➤ միայնակ/ամուսնալուծված	6 (7 %)

\* Տվյալները ցուցադրվում են որպես թիվ և (%):

Հարցվածների ռիսկի գործոնների տարածվածության ամբողջական պատկերը ներկայացված է 2-րդ աղյուսակում.

**Աղյուսակ 2**

**Ոչ վարակիչ հիվանդությունների վարքագծային ռիսկի գործոնները**

Ռիսկի գործոններ	Բոլորը n (%)	Արական n (%)	Իգական n (%)	p
Ծխում են	20 (24,1)	17 (31,4)	3 (10,3 )	p< 0,05
1. մրգեր, բանջարեղենի ամենօրյա օգտագործում (400 մգ օրը),				p< 0,01
2. չեն օգտագործում,	2 (2.4)	2 (3.7)	-	
3. օգտագործում են մինչև 400մգ,	44 (53)	34(62.9)	10 (34.5)	
4. օգտագործում են 400մգ և ավելի,	17 (20.4)	10 (18.5)	7 (24.1)	
5. օգտագործում են ոչ ամեն օր	20 (24.1)	8 (14.8)	12(41.4)	
ալկոհոլի օգտագործում վերջին մեկ ամսվա ընթացքում	46 (55.4)	25(46.3)	21 (72.4)	p< 0,05
Ֆիզիկական թերակտիվություն	16 (19.2)	5 (9.2)	11 (37.9)	p< 0,01
1. մարմնի զանգվածի ցուցանիշ (ՄՁՑ),				p< 0,01
2. թերքաշություն (ՄՁՑ <18,5),	5 (6)	1 (1.8)	4 (13.7)	
3. նորմալ քաշ (ՄՁՑ =18,5<25),	55 (66.2)	39(72.2)	16(55.1)	
4. հավելյալ քաշ (ՄՁՑ =25<30),	16 (19.2)	11 (20.4)	5 (17.2)	
5. ճարպակալում (ՄՁՑ >30)	7 (8.4)	3 (5.5)	4 (13.8)	

Հարցվածների շրջանում ծխախոտի ծխելու տարածվածությունը կազմել է 24.1% (տղամարդիկ՝ 31.4 %, կանայք՝ 10.3%, P<0.05): Ծխելը սկսելու տարիքը

հատկապես կարևոր է մեր հետազոտության համար, քանի որ այն ծխողների մոտավորապես կեսի (55% դեպքում) մոտ համընկնում է բարձրագույն ուսումնական

հաստատություններում սովորելու տարիների հետ: Առանձին հարցով պարզել ենք նաև, որ ծխողների կեսը (55%) ցանկանում է թողնել ծխելը:

Հարցվածների կեսը (53 %) օրական օգտագործել է առաջարկվածից պակաս՝ նվազագույնը 400 մգ միրգ և բանջարեղեն (տղամարդիկ՝ 62.9%, կանայք՝ 34.5%,  $P < 0.01$ ): Մագիստրոսներից միայն 20.4% է օգտագործում 400մգ և ավելի միրգ ու բանջարեղեն (տղամարդիկ՝ 18.5 %, կանայք՝ 24.1%): Հարցման մասնակիցների 20 %-ը նշել է, որ միրգ և բանջարեղեն օգտագործում է ոչ ամեն օր: Այս հարցը հատկապես անհանգստացնող է իգական սեռի մագիստրանտների մոտ, քանի որ նրանց 41.4%-ը բանջարեղեն և միրգ օգտագործում է ոչ ամեն օր, այն դեպքում, երբ արական սեռի ներկայացուցիչների մոտ այս ցուցանիշը բավականին ցածր է և կազմում է 11 % ( $P < 0.01$ ): Վերջին 30 օրվա ընթացքում ակրոհոլ օգտագործել է հարցվածների 55.4%-ը (տղամարդիկ՝ 46.3 %, կանայք՝ 72.4%,  $P < 0.05$ ): Առանձին հարցով պարզել ենք նաև, որ հարցվածների մոտավորապես կեսն է (45%) նախաճաշում:

Մարմնի զանգվածի միջին ցուցանիշ ունեցել են հարցվածների կեսից ավելին (66.2 %) և այս խմբում մեծ թիվ են կազմում տղամարդիկ (տղամարդիկ՝ 72.2 %, կանայք՝ 55.1%,  $P < 0.01$ ): Հարցվածների

19.2%-ը ունեցել է հավելյալ քաշ (տղամարդիկ՝ 20.4 %, կանայք՝ 17.2%), իսկ 8.4%-ի մոտ եղել է ճարպակալում (տղամարդիկ՝ 5.5 %, կանայք՝ 13.8%,  $P < 0.01$ ): Ընդհանուր առմամբ մասնակիցների 19.2%-ը նշել է՝ ֆիզիկական թերակտիվություն, ընդ որում՝ սեռերի միջև առկա է նկատելի տարբերություն (տղամարդիկ՝ 9.2%, կանայք՝ 37.9%,  $P < 0.01$ ):

Բիսկի գործոնների վերլուծությունը բացահայտում է նաև, որ հարցվածների 87.3%-ի մոտ առկա է առնվազն մեկ ռիսկի գործոն:

#### **Եզրակացություն: Հետազոտության արդյունքներից ելնելով՝ կարող ենք եզրահանգել.**

- Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնները բավականին տարածված են մագիստրոսների շրջանում, և նրանց 87.3%-ի մոտ առկա է առնվազն մեկ ռիսկի գործոն:

- Առանձնահատուկ մտահոգություն է առաջացնում մագիստրոսների սննդակազմում մրգերի և բանջարեղենի ցածր քանակությունը:

- Չնայած մագիստրոսների մեծ մասի մոտ առկա է բարձր ֆիզիկական ակտիվություն, սակայն շարունակում է անհանգստացնել նրանց 1/3-ի մոտ ճարպակալման և հավելյալ քաշի առկայությունը:

- Անհրաժեշտ է մշակել գործողությունների ծրագիր՝ ուղղված մագիստրոս-

ների առողջության ամրապնդմանը և  
ռիսկի գործոնների նվազմանը:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Վ. Ա., Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածությունը ՀՀ Լոռու մարզում, Բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Սեղմագիր, ՀՀ ԱՆ ԱԱԻ, Երևան, 2011, 25 էջ:
2. Անդրեասյան Դ., Բազարյան Ա., Սարգսյան Շ., Թորոսյան Ա., Միրզոյան Մ., Բիծյան Լ., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան-2019, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Երևան, 2020, էջ 72:
3. Անդրեասյան Դ., Բազարյան Ա., Մանուկյան Ս., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան-2021, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Երևան, 2022, 239 էջ:
4. Անդրեասյան Դ., Մանուկյան Ս., Զելվեյան Պ., Քյուրումյան Ա., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում 2012թ. Ազգային զեկույց, ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, 2012:
5. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ Առողջապահության նախարարություն և ORC Macro, 2006 թ., Հայաստանի ժողովրդագրական և առողջության հարցերի հետազոտություն 2005, Calverton, Maryland USA, Երևան, 2006, 422 էջ:
6. Անդրեասյան Դ., Բազարյան Ա., Թորոսյան Ա., Կարապետյան Հ., Սաղաթեյան Ա., Սարգսյան Շ., Վարդանյան Ծ., ՈՎՀ ՌԳ STEPS ազգային հետազոտություն, Հայաստան, 2018 ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Երևան 2018, էջ 238:
7. Դավիդյանց Վ., Անդրեասյան Դ., Բադալյան Ա., Խանգեյան Ս., Կալիկյան Զ., Մանուկյան Ս., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում 2007թ., STEPS ազգային հետազոտություն, Ազգային զեկույց, ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, 2008:

8. World Health Organization. Noncommunicable Diseases. Fact sheet. 2022. Available online: <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/noncommunicable-diseases> (accessed on 20 January 2023)
9. <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/the-top-10-causes-of-death> (accessed on 26 June 2023).

## PREVALENCE OF RISK FACTORS FOR NON-COMMUNICABLE DISEASES AMONG MASTERS

*V. A. Abovyan, G. L. Nalbandyan, G. R. Ascatryan  
Armenian State Institute of Physical Culture  
and Sport, Yerevan, Armenia*

### ABSTRACT

**Keywords:** Non-communicable diseases, risk factors, smoking, alcohol consumption, unhealthy diets, physical inactivity.

**Research relevance:** Non-communicable diseases (NCDs) are collectively responsible for 74% of all deaths worldwide. More than three-quarters of all the NCD deaths occur in low-income and middle-income countries, and 86% of the 17 million people who died prematurely, or before reaching their 70s. NCDs share four major risk factors: tobacco use, physical inactivity, the harmful use of alcohol and unhealthy diets.

**Research aim:** The purpose of the study is to identify the prevalence of risk factors of chronic non-communicable diseases among Masters of Armenian State Institute of Physical Culture and Sport and to give suggestions on reducing risk factors.

**Research methods and organization:** The research was carried out in Armenian State Institute of Physical Culture and Sport using our localized version of "CINDI- (Countrywide Integrated Non Communicable Disease Intervention) health monitoring" questionnaires. A survey was carried out among 83 Masters.

**Research results and analysis:** Analysis of risk factors shows that 87.3% of respondents have at least one risk factor, 24% of respondents smoke, 55.4% have consumed alcohol during the month, 19% are overweight, 9% are obese, 19.2% of respondents are inactive. Only 20% of students meet the WHO guidelines for daily consumption of fruits and vegetables.

**Conclusion:** Risk factors for non-communicable diseases are quite common among masters and 87.3% of them have at least one risk factor. Although the majority of masters have high physical activity, 1/3 of them are obese and overweight.

## РАСПРОСТРАНЕННОСТЬ ФАКТОРОВ РИСКА НЕИНФЕКЦИОННЫХ ЗАБОЛЕВАНИЙ СРЕДИ МАГИСТРОВ

*В. А. Абовян, Г. Л. Налбандян, Г. Р. Асцатрян,  
Государственный институт физической культуры  
и спорта Армении, Ереван, Армения,*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** Неинфекционные заболевания, факторы риска, курение, употребление алкоголя, нерациональное питание, гиподинамия.

**Актуальность исследования:** Неинфекционные заболевания (НИЗ) в совокупности являются причиной 74% всех смертей во всем мире. 86% из 17 миллионов человек, умерших преждевременно или до достижения 70-летнего возраста от НИЗ, приходится на страны с низким и средним уровнем дохода. Для НИЗ характерны четыре основных фактора риска: употребление табака, алкоголя, нездоровое питание и гиподинамия.

**Цель исследования:** Выявить распространенность факторов риска хронических неинфекционных заболеваний среди студентов магистратуры Государственного института физической культуры и спорта Армении (ГИФКСА) и дать рекомендации по выбору здорового образа жизни и снижению факторов риска.

**Методы и организация исследования:** Исследование проведено в ГИФКСА с использованием нашей локализованной версии опросника «CINDI- (общенациональное интегрированное вмешательство по борьбе с неинфекционными заболеваниями) для мониторинга здоровья». В опросе приняли участие 83 магистра.

**Анализ полученных результатов:** Анализ факторов риска показывает, что 87,3% респондентов имеют хотя бы один фактор риска, 24% опрошенных курят, 55,4% употребляли алкоголь в течение месяца, 19% имеют избыточный вес, 9% страдают ожирением, 19,2% респондентов малоподвижны. Только 20% учащихся соответствуют требованиям ВОЗ в отношении ежедневного потребления фруктов и овощей.



**Краткие выводы:** Факторы риска неинфекционных заболеваний довольно широко распространены среди магистров и 87,3% из них имеют хотя бы один фактор риска. Хотя большинство магистров имеют высокую физическую активность, но 1/3 из них имеют ожирение и лишний вес.

### **Տեղեկություններ հեղինակների մասին**

Վարդան Արտավազդի Աբովյան՝ բ.գ.թ., Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: [vardan.abovyan@sportedu.am](mailto:_vardan.abovyan@sportedu.am),

Գևորգ Լևոնի Նալբանդյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: [gevorg.nalbandyan@sportedu.am](mailto:gevorg.nalbandyan@sportedu.am)

Գայանե Ռոմանի Ասցատրյան՝ Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: [gayane.astsatryan@sportedu.am](mailto:gayane.astsatryan@sportedu.am)

### **Information about the authors**

**Vardan Artavazd Abovyan**, MD, PhD, Associate Professor, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [vardan.abovyan@sportedu.am](mailto:vardan.abovyan@sportedu.am)

**Gevorg Levon Nalbandyan** PhD, Associate Professor of the Chair of Physical Rehabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [gevorg.nalbandyan@sportedu.am](mailto:gevorg.nalbandyan@sportedu.am)

**Gayane Roman Ascatryan** lecturer of the Chair of Physical Rehabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [gayane.astsatryan@sportedu.am](mailto:gayane.astsatryan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 16.05.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 17.05.2023–ին:

Գրախոս՝ հ.գ.թ., պրոֆեսոր Հ. Բաբայան

ՀՏԴ 796.035 21Տ-5C177

DOI: 10.53068/25792997-2023.2.9-181

**ԱՌՈՂՋԱԽՆԱՅՈՂ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՒՍԱՆՈՂԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՏՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

*Ա. Լ. Գրիգորյան, Ս. Ս. Հակոբյան, Ա. Վ. Մարտիրոսյան  
Հայ-ռուսական համալսարան,  
Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Առողջարարական, առողջախնայող, աշխատունակություն, աերոբ և անաերոբ, զարկերակային գոտիներ, ռեժիմներ:

**Հետազոտության արդիականություն:** Առողջարարական ուղղվածությամբ ֆիզիկական ակտիվությունը վերջին տասնամյակների ընթացքում աստիճանաբար սկսել է ավելի մեծ տեղ զբաղեցնել Հայաստանի հանրապետության երիտասարդության կենսակերպում: Ոլորտի վերլուծության արդյունքների համաձայն պարզորոշ է դառնում, որ առողջարարական ֆիզկուլտուրայի կիրառման գործընթացում դեռևս առկա են բազմաթիվ չլուծված կիրառական խնդիրներ:

Ֆիզիկական կուլտուրայի ոլորտում գոյություն ունեցող միջոցների և մեթոդների առկա համակարգը, դրանց օգտագործման եղանակները չի կարելի դիտել իբրև ինչ-որ մի անփոփող համակարգ: Վերջինս փոփոխական է և անխուսափելիորեն շարունակելու է բարելավվել գիտական նվաճումների հետ զուգընթաց: Այսպես, օրինակ, ֆիզիկական դաս-

տիարակության, սպորտի ու առողջության հոգեբանության, կենսաքիմիայի, ֆիզիոլոգիայի, բժշկականսաբանական և այլ հարակից ոլորտների գիտական նվաճումներն ուղղակիորեն կամ անուղղակի օժանդակել և այսօր շարունակվում են նպաստել ֆիզիկական բեռնվածությունների կարգավորմանը, վարժման մեթոդների ու միջոցների ռացիոնալ օգտագործման եղանակների, առողջարարական տեխնոլոգիաների բարելավմանը: Բացի այդ վերը նշված գործընթացների բարելավմանը մեծ թափ են հաղորդել նաև անընդհատ նորացվող տեխնիկական միջոցները, վարժասարքերը, մարզական արդիականացվող պայմանները և այլն:

Առողջարարական ֆիզիկական կուլտուրայի մեթոդիկայի կատարելագործման շարժիչ ուժը ոչ միայն պրակտիկայի առաջավոր փորձն է, այլ առաջադեմ տեսական նկատառումները, նոր մշակումները, որոնց արդյունավետությունը հիմնավորվել է ժամանակակից գիտափորձերի արդյունքներով:

Ֆիզիկական դաստիարակության համակարգի հետագա կատարելագործման, առողջության պահպանման ու ամրապնդման, ֆիզիկական բեռնվածության նորմավորման, մեթոդների և միջոցների կիրառման առանձնահատկությունների լուսաբանումներին են անդրադարձել ինչպես արտասահմանյան, այնպես էլ հայրենական հեղինակների ուսումնասիրությունները՝ Ա.Ա.Տեր-Հովհաննեսյան [5], Ն.Գ.Օզոլին [6], Վ.Մ.Ջաջիրսկի [7], Ֆ.Ուիլտի [8], Ե.Ս.Հակոբյան [3], Է.Ավանեսով, Ա.Չատինյան [1], Հ.Գ.Թումանյան, Վ.Մ.Ավագիմյանց, Լ.Ա.Մելքոնյան [2], Ա.Լ.Գրիգորյան, Կ.Մ.Վեքիլյան, Ս.Վ. Հովհաննիսյան, Ա.Վ.Մարտիրոսյան [4]:

Ներկայումս առողջարարական ֆիզկուլտուրայով զբաղվողների համար հասանելի են դարձել նաև տարբեր վարժասարքեր, ֆիզիկական բեռնվածության ազդեցությանը վերահսկող բժշկակենսաբանական սարքեր (թթվածնի հագեցման, զարկերակի հաճախականության, էլեկտրոնային չափիչներ, արյան ճնշման էլեկտրոնային չափիչներ՝ տոնոմետր և այլ միջոցներ):

Հայտնի է, որ ֆիզիկական ակտիվության փոփոխությունների արդյունքում, փոփոխվում է նաև սրտի զարկերի հաճախականությունը (ՍԶՀ): Դրա հետ մեկտեղ փոփոխվում է սրտի սիստոլիկ

ծավալը, որը շարունակվում է աճել մինչև 115-120 զարկ/րոպեի սահմանը (Ա.Խոլոդ) [10]: Սակսած 120 զարկ/րոպեից, աորտա մտնող արյան ծավալի (սրտի արտանետում) ու սրտի զարկերի հաճախականության միջև առաջանում է ուղիղ կապ: Բնականաբար, ուղիղ կապ է առաջանում նաև ՍԶՀ ու թթվածնի սպառման ցուցանիշների, ինչպես նաև ֆիզիկական բեռնվածության հզորության ու ՍԶՀ ցուցանիշների միջև: Նշված պարամետրերի ուղղակի փոխադարձ կապերը ավարտվում են, երբ ՍԶՀ ցուցանիշը գերազանցում է 175 զարկ/րոպե: Այդ սահմանը անվանել է անաերոբ նյութափոխանակության շեմ (Վ.Սիրոն ) [9]:

Վերջին տարիներին հաճախ քննարկումները վերաբերվում են զարկերակային գոտիների խնդիրներին: Այս առումով գիտական ասպարեզում, դեռևս չկա միասնական կարծիք: Առավել հաճախ առաջարկվում են՝ 3, 5 և 7 զարկերակային գոտիներից բաղկացած մոդելները (Մ.Ր.Ամիրնով, Ա.Խոլոդ) [10]:

2018-20թ.թ. մեր կողմից կատարված ուսումնասիրությունների հիման վրա 120 զարկ/րոպե մինչև 175 զարկ/րոպե զարկերակային տիրույթ՝ որտեղ գերիշխում են աերոբ էներգաապահովման մեխանիզմները, բաժանվել է 5 գոտիների (տես՝ աղյուսակ 1):

**Աղյուսակ 1.**

**Առողջարարական ֆիզիկական կուլտուրայի բեռնվածության ուղղվածությունը կարգավորող զարկերակային գոտիներ (Ա.Լ. Գրիգորյան, Կ.Մ. Վեքիլյան, Ս.Վ. Հովհանեսյան, Ա.Վ. Մարտիրոսյան)**

Գոտի	Էներգաապահովման տեսակները (բեռնվածության ուղղվածությանը)	ՍԶՀ միջակայքը % առավելագույնից	ՍԶՀ միջակայքը զարկ/րոպե
1-ին	Աերոբ սպիտակուցային (առողջարա - վերականգնիչ)	50-60% ՍԶՀ	100-118
2-րդ	Աերոբ – լիպիդային (Ֆիթնես)	60-70% ՍԶՀ	118-140
3-րդ	Աերոբ - ածխաջրային	70-80% ՍԶՀ	140-155
4-րդ	Աերոբ – անաերոբային (խառը)	80-90% ՍԶՀ	155-175
5-րդ	Անաերոբային	90-100% ՍԶՀ	175-190

Վերը նշվածով պայմանավորված է սույն հետազոտության արդիականությունը, տեսական և գործնական նշանակությունը:

**Հետազոտության նպատակը, խնդիրները:** Հետազոտության նպատակն է՝ բացահայտել առողջախնայող հատուկ միջոցների գործառնական կարևորությունը ժամանակակից երիտասարդության ֆիզիկական դաստիարակության արդի համակարգում:

**Հետազոտության խնդիրներն են.**

1. Սոցիոլոգիական հարցման միջոցով ի հայտ բերել ուսանողների շրջանում տարածված ֆիզիկական ակտիվության ձևերի հարաբերակցությունը:

2. Հիմնավորել երիտասարդների օրգանիզմի էներգաապահովման աղբյուրների սահմանային շեմերի հաշվառման կարևորությունը նրանց հարմարվողականության ընդլայնման գործընթացում:

3. Լաբորատոր հետազոտության միջոցով պարզել էներգաապահովման տարբեր գոտիներում դրսևորվող ֆիզիկական աշխատունակության մակարդակը:

4. Որոշել էներգաապահովման հինգ գոտիներում ուսանողների ցուցաբերած աշխատունակության ցուցանիշների փոխկապվածության կառուցվածքը և վերջինիս փոփոխությունը նրանց ֆիզիկական պատրաստության շարժընթացում:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Սույն հետազոտությունը նախատեսված է անցկացնել երեք փուլով.

1. Սոցիոլոգիական հարցումներ բուհերի ուսանողների շրջանում տարածված ֆիզիկական ակտիվության ձևերի հարաբերակցության պարզաբանման նպատակով:

2. Լաբորատոր հետազոտությունների միջոցով, որոշել մարզվող երիտասարդության ֆիզիկական աշխատունակության մակարդակը (տես՝ աղյուսակ 2)

3. Մշակել առողջարարական ֆիզիկական կուլտուրայով զբաղվողների համար գոտիավորված արդյունավետ մարզման ռեժիմներ, դրանց կիրառման խմբային և անհատական պարապմունքների մեթոդական հանձնարարականներ:

Մեր առջև դրված խնդիրները նախատեսել ենք լուծել երեք խումբ մեթոդների միջոցով՝

1. սոցիոլոգիական հարցումներ,

2. գործիքային և թեստային հետազոտություններ,

3. վիճակագրական վերլուծության և ստացված արդյունքների մեկնաբանություն:

Սոցիոլոգիական հարցումները միտված էին ի հայտ բերելու ուսանողների տեղեկատվության աստիճանը առողջարարական ֆիզիկական կուլտուրայի, ա-

ռողջության պահպանման և բարելավման, ինչպես նաև նրանց վերաբերմունքը առողջ ապրելակերպի վերաբերյալ: Առաջադրված խնդիրները լուծելու նպատակով կիրառվել է հարցման անկետային մեթոդը:

Գործիքային և թեստավորման հետազոտությունները անց են կացվել լաբորատոր պայմաններում, կիրառելով՝ 1.վելոէրգոմետրիա – PWC<sub>170</sub>: Նախնական ստուգվել է արյան ճնշումը և սրտի զարկերակի հաճախականությունը՝ 5 ր. աշխատանքից հետո առաջին ստուգումը 1 րոպեանոց դադարով, 5 ր.՝ երկրորդ աշխատանքը և վերջնական ստուգումը:

2. Տրենդբանի թեստը 12 րոպեանոց վազք, ստուգվել է արյան ճնշումը և սրտի զարկերակի հաճախականությունը մինչև թեստը և ավարտից հետո, արձանագրվել է հաղթահարված տարածությունը:

Հետազոտություններում բեռնվածության և վերականգման ընթացքում օգտագործել ենք պուլսոքսիմետրիա, տոնոմետրիա, սատուրոմետրիա:


Վիճակագրական վերլուծությունում կիրառել ենք մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ, որոնց միջոցով մշակվել են արձանագրված թվային տվյալները:

Սոցիոլոգիական հարցումները և լաբորատոր հետազոտությունները անց են կացվել 01.10.2022 թ. մինչև 01.06.2023թ., նրանում ներգրավել ենք Հայ-ռուսական

համալսարանի (ՀՌՀ) HIV կուրսի 156 ուսանողների՝ 92 տղաներ և 64 աղջիկներ: ՀՌՀ ստեղծվել էր հատուկ լաբորատորիա հագեցված անհրաժեշտ սարքավորումներով:

պատկերով ներկայացնել այսօր ՀՌՀ-ում ուսանողների շրջանում տարված ֆիզիկական ակտիվության ձևերի հարաբերակցությունը, որը ներկայացված է 1-ին տրամագրում.

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Սոցիոլոգիական հարցումների ամփոփումը թույլ է տալիս



**Տրամագիր 1. Ուսանողների ֆիզիկական ակտիվության ձևերի հարաբերակցությունը Հայ-ռուսական համալսարանում**

Վերլուծելով ուսանողների ֆիզիկական ակտիվության ձևերի տոկոսային ցուցանիշների հարաբերակցությունը, ինչպես նաև առողջության հանդեպ դրական վերաբերմունք ձևավորելու գործոնները՝ կարող ենք արձանագրել, որ ուսանողների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման գործընթացը և առողջ կենսակերպը պայմանավորված են այնպիսի օբյեկտով գործոններով, ինչպիսիք են՝ տնտեսական, սոցիալական, կենցաղային և ուսումնական պայմանները, ազատ ժամանակի առկայությունը, որոնք անդրադառնում են ֆիզիկական ակտիվության վերաբերմունքի վրա: Ուսանողի

առողջության հանդեպ դրական վերաբերմունքի ձևավորումը կախված է ուսուցանվող առաջարկների և ուղղորդված գործնական ու տեսական դասերի բովանդակությունից. ինչպես նաև ծնողի, դասախոսների, ՁԼՄ-ների, և ընդհանուր առմամբ, ողջ հասարակության ներգործությունից:

Լաբորատոր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը, ի հայտ բերեց առողջաբանական և առողջախնայող հատուկ միջոցների ուղղակի կապը ֆիզիկական բեռնվածության ուղղվածությունը կարգավորող զարկերակային գոտիների միջև (աղյուսակ 2):

**Աղյուսակ 2.**

**Ֆիզիկական բեռնվածությունը և զարկերակային գոտիները**

Մասնակիցներ	Վելոերգոմետրիա			Տրեբանի թեստ /12' վազք/			Համընկնում զարկերակային
	Ս Չ Հ			Ս Չ Հ		Հաղթահ. տարածություն	
	Մինչև թեստը	1-ին 5 ր. հետո	2-րդ 5 ր. հետո	Մինչև թեստը	Ավարտից հետո		
	Միջին տատանում					Մ ի ջ ի ն	
Ուսանողներ	83-86	114-121	126-132	81-84	129-140	1680	I – II
Ուսանող ֆուտբոլիստներ	78-83	122-138	145-165	76-80	160-174	2250	III-IV
Ուսանող բասկետբոլիստներ	79-81	129-141	150-158	78-80	152-170	2190	III-IV

Հետազոտություններում ներգրավված ուսանողների 24% ՀՌՀ տարբեր մարզածների հավաքական թիմերի անդամներն են, և նրանց բեռնվածությունը շաբաթական ցիկլում կազմել է 6 ժամ: Իսկ մնացած հետազոտվող ուսանողների բեռնվածությունը շաբաթական ցիկլում տատանվել է 3-4 ժամվա սահմաններում: Ուստի, մարզիկ ուսանողների ՍՂՀ միջակայքի և ՍՂՀ զարկ/րոպեն տատանվել՝ 70-90% և 140-175 զարկ/րոպե տիրույթում, որը համապատասխանում է զարկերակային գոտիները կարգավորող մոդելի 3-րդ և 4-րդ գոտիներում, իսկ մյուս խումբ ուսանողների բեռնվածությունը տատանվել է զարկերակային 1-ին և 2-րդ գոտիների միջակայքում: Հավելենք, որ թեստավորման ընթացքում ոչ մարզիկ ուսանողները չէին կարող կատարել առաջադրանքի անհրաժեշտ պայմանները, ուստի թեստի կատարման տեմպն ավելի ցածր էր, ինչն անդրադարձավ ավելի ցածր զարկերակային ցուցանիշների վրա:

### Եզրակացություն.

1. Ուսանողների ֆիզիկական ակտիվության և առողջ կենսակերպի հարաբերակցությունը պայմանավորված է այնպիսի օբյեկտիվ գործոններով, որոնք անխուսափելիորեն անդրադառնում են ֆիզիկական ակտիվության վերաբերմունքի վրա:

2. Շաբաթական ցիկլում մինչև 3 ժամ ֆիզիկական բեռնվածությամբ պարապմունքները լոկ «компенсирует» փոխհատուցում է ֆիզիկական պատրաստության մակարդակը, որը համապատասխանում է ֆիզիկական բեռնվածության ուղղվածությունը կարգավորող զարկերակային սանդղակի 1-ին և 2-րդ գոտիներին:

3. Շաբաթական ցիկլում 3-6 ժամ տևողությամբ ֆիզիկական բեռնվածության պարապմունքները այն լավագույն ժամանակահատվածն է, որը դրական տեղաշարժ է արձանագրում ֆիզիկական պատրաստվածության մակարդակում և համընկնում է զարկերակային 3-րդ և 4-րդ գոտիներին [4]:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսով Հ., Չատինյան Ա., Դպրոցականների ֆիզիկական դաստիարակության կազմակերպման նորարարական տեխնոլոգիա, Մանկավարժական միտք, N 3-4, 2010, էջ 55-62:
2. Թումանյան Հ. Գ., Ավագիմյանց Վ. Մ., Մելքոնյան Լ. Ա., Ուսանողուհիների ֆիզիկական զարգացման հատկանիշների դարակազմիկ տեղաշարժերը, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական, N 2, 2020, էջ 112-124:



3. Հակոբյան Ե. Ս., Մարդու ողնաշարի շարժունակությունը՝ տարիքային տեսանկյունից և կատարելագործման մեթոդիկան, Մանկ.գիտ.դոկ., Սեղմ., ԺԳ. 00.02, Երևան, 2015, էջ 163-175:
4. Григорян А. Л., Векилян К. М., Оганесян С. В., Мартиросян А. В., Оздоровительная физическая культура в системе здорового образа жизни современной студенческой молодежи (учебно-методическое пособие для студентов)-Ер.: Изд. РАУ. 2020 -80 с.
5. Тер-Ованесян А. А., Спорт /обучение, тренировка, воспитание/-М: Физкультура и спорт, 1967, 208 с.
6. Озолин Н. Г., Современная система спортивной тренировки.-М.: ФиС, 1970 - 479 с.
7. Зациорский В. М., Физические качества спортсмена.-М.: ФиС, 1970 - 200 с/
8. Уилт Ф., Бег, бег, бег. М.: ФиС, 1967, 376 с.
9. Сыроев В., Зоны пульса при беге-2019.//[https:// www.vam 3d.com/zony-pulsa-pri-bege/](https://www.vam3d.com/zony-pulsa-pri-bege/) # i - 2
- 10.Холод А., Про пульсовые зоны - 2018. //www. Running – life.ru /heartra tezonel/

## THE USAGE OF HEALTH-SAVING MEANS IN THE SYSTEM OF STUDENT'S PHYSICAL EDUCATION

*A. L. Grigiryan, S. S. Akopyan, A. V. Martirosyan  
Armenian-Russian University Yerevan, Armenia*

### ABSTRACT

**Keywords:** Wellness, health-saving, activity, dynamics, workout modes, frequency, heart rate zones.

**Research relevance:** Health-oriented physical activity has gradually started to occupy a larger place in the lifestyle of the RA youth over the last decades. According to the results of the analysis of this sector, it becomes clear that there are still many unsolved applied problems in the process of improving healthy physical culture.

**Research aim:** We aimed to perform a post-examination arising from the requirements of the current stage, which is aimed at revealing the functional importance of special health-saving means in the system of physical education of the young.

Research objectives are to:

1. To reveal the correlation of forms of physical activity among students through a sociological survey.

2. With the help of laboratory studies to identify the limits of physical workability in different energy-saving zones.

3. To determine the correlation structure of indicators of workability shown by students in five zones of energy supply and change in indicators in the process of physical training.

**Research methods and organization:** We used the following research methods

1. Sociological surveys

2. Laboratory - Instrumental and Test studies

3. Statistical analysis and interpretation of obtained results.

**Research results and analysis:** Analyzing the ratio of percentages of students' forms of physical activity, as well as the factors of forming a positive attitude towards health, we can record that a number of objective factors determine the process of organizing students' physical education and a healthy lifestyle.

**Conclusion:** Training with physical load up to 3 hours in a weekly cycle only compensates for the level of physical fitness. Therefore, 3-6 hours of training is the best period that positively effects the level of physical fitness.

A direct connection of health-improving and health-saving special means between arterial zones regulating the direction of physical activity has been revealed.

## ПРИМЕНЕНИЕ ЗДОРОВЬЕСБЕРЕГАЮЩИХ СРЕДСТВ В СИСТЕМЕ ФИЗИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ СТУДЕНТА

*А. Л. Григорян, С. С. Акопян, А. В. Мартиросян  
Армянско-российский университет, Ереван, Армения*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** оздоровительный, здоровьесберегающий, работоспособность, динамика, режимы тренировок, частота, пульсовые зоны.

**Актуальность исследования:** Физическая активность оздоровительного направления в последние десятилетия постепенно стала занимать все большее место в образе жизни молодежи Республики Армения. По результатам анализа состояния оздоровительной физической культуры становится ясно, что в этой сфере все еще существует множество нерешенных прикладных проблем.

**Цель исследования:** Мы поставили перед собой цель провести исследование, вытекающее из требований нынешнего этапа, которое направлено на выявление практической значимости специальных здоровьесберегающих средств в системе физического воспитания молодежи.

**Задачи исследования:**

1. Выявить с помощью социологического опроса соотношение видов физической активности среди студентов.
2. С помощью лабораторных исследований выявить в разных энергосберегающих зонах пределы физической работоспособности.
3. Определить в пяти зонах энергосбережения показатели работоспособности студентов и изменение показателей в процессе физической подготовки.

**Методы и организация исследования.** Мы применили следующие методы исследования:

1. Социологические опросы
2. Лабораторные: инструментальные и тестовые исследования
3. Статистический анализ и интерпретация полученных результатов.

В социологических опросах мы использовали анкетный метод, а инструментальные и тестовые исследования проводились в лабораторных условиях: использовали велоэргометрию PWC170, тредбан, беговой тест 12.1 при нагрузке и восстановлении пульсоксиметрия, тонометрия, сатурометрия.

Анализ полученных результатов.

Исследования проводились в 2022 году. В нем приняли участие 156 студентов 1–4 курсов Армяно-российского университета.

**Краткие выводы:**

1. Уровень физической подготовки компенсируется только при занятиях с физической нагрузкой до 3 часов в недельном цикле.
2. 3-6-часовая нагрузка - это оптимальный период, который положительно влияет на уровень физической подготовки.
3. Выявлена прямая связь оздоровительных и здоровьесберегающих специальных средств между пульсовыми зонами, регулирующими направленность физической нагрузки.

**Տեղեկություններ հեղինակների մասին**

Արմեն Լևոնի Գրիգորյան՝ մ.գ.դ., Հայ-ռուսական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դոցենտ, Երևան, Հայաստան,

Email: [armengrigoryan61@mail.ru](mailto:armengrigoryan61@mail.ru),

Սամսոն Սուրիկի Հակոբյան՝ մ.գ.թ., Հայ-ռուսական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի պրոֆեսոր, Երևան, Հայաստան,

Email: [S.hakobyan1954@mail.ru](mailto:S.hakobyan1954@mail.ru),

Անի Վասիլի Մարտիրոսյան՝ մ.գ.թ., Հայ-ռուսական համալսարանի ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դոցենտ, Երևան, Հայաստան,

Email: [animartirosyan88@mail.ru](mailto:animartirosyan88@mail.ru).

**Information about the authors**

**Armen Levon Grgoryan** – PhD in Pedagogy, Associate Professor, Head of the Chair of Physical Culture and Healthy Lifestyle, Armenian-Russian University, Yerevan, Armenia, Email: [armengrigoryan61@mail.ru](mailto:armengrigoryan61@mail.ru),

**Samson Surik Hakobyan** - PhD in Pedagogy., Professor of the Chair, Physical Culture and Healthy Lifestyle, Armenian-Russian University, Yerevan, Armenia,

Email: [S.hakobyan1954@mail.ru](mailto:S.hakobyan1954@mail.ru),

**Ani Vasil Martirosyan** - PhD in Pedagogy., Associate Professor of the Chair Physical Culture and Healthy Lifestyle, Armenian-Russian University, Yerevan, Armenia,

Email: [animartirosyan88@mail.ru](mailto:animartirosyan88@mail.ru).

Հոդվածն ընդունվել է 20.05.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 21.05.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան

**ԲԱԺԻՆ 5. ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ ԵՎ  
ԱԴԱՊՏԻՎ ՍՊՈՐՏԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ**

ՀՏԴ 796.032

DOI: 10.53068/25792997-2023.2.9-192

**ՊԱՐԱԼԻՄՊԻԿ ՍՊՈՐՏԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՇՄԱՆԴԱՄԱՅԻՆ ՍՊՈՐՏԻ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Գ. Հարությունյան, Ա. Գ. Սյրեփանյան  
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Պարալիմպիկ շարժում, հաշմանդամային սպորտ, ադապտիվ ֆիզիկական կուլտուրա, ադապտիվ սպորտ, պարալիմպիկ մարզաձևեր:

**Հետազոտության արդիականություն:** Հաշմանդամային սպորտը համընդհանուր սպորտի անբաժանելի մասն է: Իրականում այն մրցակցական և ֆիզիկական պատրաստականության գործընթաց է: Այստեղ վառ արտահայտված է հաղթանակի հասնելու ձգտումը, բարձր արդյունքների նվաճումը, ֆիզիկական, հոգեբանական և բարոյական նորմերի ամբողջականությունը: Հայաստանի Հանրապետության անկախության ժամանակաշրջանում այս հիմնախնդրի լուծման գործընթացի կարևոր օղակներից մեկը հաշմանդամային սպորտի մասնագետների պատրաստումն է, որն իրականացվում է ՀՖԿՍՊ ինստիտուտում, իսկ ներկայումս այս ոլորտի գերակա ուղղություն-

ներից է պարալիմպիկ մարզաձևերի ձևավորման և զարգացման հիմնահարցը, որն էլ առաջադրում է համապատասխան կրթական հաստատություններում, մասնավորապես՝ ՀՖԿՍՊ-ում, ստեղծել մասնագիտական կրթական ծրագրեր՝ համապատասխան ուղղությամբ մարզիչների նպատակային պատրաստման համար: Այս համատեքստում, Հայաստանում հաշմանդամային սպորտը, որպես կրթության և գիտության անբաժանելի բաղադրիչ, սոցիալական ինտեգրացման արդի բնագավառում ունի զարգացման մեծ հեռանկարներ: Այն պայմանավորված է բնակչության շրջանում առկա առողջական խնդիրներով, որոնք բնական աղետների, պատերազմների, բազմաբնույթ հիվանդությունների և այլ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառների հետևանք են: Այստեղ կարևոր է պետության, պետական քաղաքականության, գաղափարախոսու-

թյան դրսևորումներն ադապտիվ և հաշմանդամային սպորտի, հատուկ օլիմպիադաների, պարաօլիմպիկ սպորտի նկատմամբ, հատկապես կարևորելով սպորտի կրթադաստիարակչական ռազմավարությունը, որը միանշանակ կնպաստի ֆիզիկական և մտավոր զարգացման շեղումներ ունեցող անձանց և՛ սոցիալականացմանը, և՛ զարգացմանը:

Միջազգային մակարդակում հաշմանդամների ադապտացման և վերականգման նպատակով սպորտը ներառվել է այդ կարգավիճակում գտնվող մարդկանց կյանքում՝ նյարդաբան Լյուդվիգ Գուլթմանի ջանքերով: Լ. Գուլթմանը տարված էր այն գաղափարով, որ հաշմանդամ մարզիկները մասնակցեն օլիմպիական խաղերին, որը հաջողվում է, և ավանդորեն պարաօլիմպիկ խաղերն անցկացվում են նույն մարզադաշտերում և մարզահրապարակներում, որտեղ անցկացվում են օլիմպիական խաղերը: Պարաօլիմպիկ խաղերի ծնունդը մի հսկայական որակական թռիչք է ոչ միայն սպորտի, այլև համայն մարդկության զարգացման ճանապարհին և դրանց անընդհատ կատարելագործումը: Պարաօլիմպիկ գաղափարների արմատավորումը և զանգվածային տարածումը՝ մարզական շարժման համընդհանուր վերելքի և դրան զուգորդվող քաղաքակրթության ձևավորման գործընթաց է:

Պարաօլիմպիկ խաղերը բացահայտում են ոչ միայն ֆիզիկական սահմանափակումներ ունեցող մարդկանց ներուժը, այլև տարբեր երկրներում հասարակական բոլոր ոլորտներում՝ կառավարման, տնտեսական, կրթական, քաղաքական շրջանակներում պարաօլիմպիկ դրսևորումները: Այն միացնում է հաշմանդամային սպորտը մշակույթի, կրթության հետ և ձգտում է ստեղծել կյանքի պատկեր՝ հիմնված բերկրանքի, դաստիարակության արժեքների, օրենքների վրա, ինչպես նաև հարգանք՝ ազգագրական, կրոնական սկզբունքների նկատմամբ: Ելնելով վերոգրյալից՝ մեր խնդիրն է բացահայտել պարաօլիմպիկ շարժման նշանակությունը:

Կարծում ենք, որ վերոգրյալը ՀՀ-ում առանցքային է, մասնավորապես կակտիվացնի մասնագետների, ֆեդերացիաների հետաքրքրվածությունը, պատասխանատվությունը և ուշադրությունը՝ ուղղված հաշմանդամային սպորտի զարգացմանը և տարածմանը: Պարաօլիմպիկ սպորտի զարգացման համատեքստում պարաօլիմպիկ մարզաձևերի կառավարման վերաբերյալ անհրաժեշտ են մասնագիտական գիտելիքներ, և պարաօլիմպիկ սպորտը պետք է դիտարկել՝ որպես սոցիալական օբյեկտ: Հաշմանդամային սպորտի հաջող զարգացումը նախապայման է պարաօլիմպիկ մարզաձևերի զարգացման համար, և հակառակը:

**Հետազոտության նպատակը, խնդիրները:** Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել պարաօլիմպիկ սպորտի նշանակությունը հաշմանդամային սպորտի զարգացման գործընթացում:

Հետազոտության խնդիրն է՝ ուսումնասիրել պարաօլիմպիկ սպորտի զարգացման առանձնահատկությունները և միջազգային պարաօլիմպիկ շարժման զարգացման նախադրյալները:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Ուսումնասիրությունն իրականացրել ենք փուլային տարբերակով՝ գրական աղբյուրների վերլուծում և համադրում, ռետրոսպեկտիվ մեթոդների օգնությամբ վերլուծություն:

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Պարաօլիմպիկ շարժման արտերկրի և հայրենական բազմամյա փորձն ապացուցում է հաշմանդամային սպորտի դերը մարդկանց վերադարձնելու վստահությունը, հավատը սեփական ուժերի հանդեպ, ինքնահարգանքը, հասարակության հետ ինտեգրվելու հնարավորությունը, նաև պետական կառավարման ռազմավարական ծրագրերում նրա տեղը և դիրքորոշումները: Այս գործընթացի կազմակերպումը և կառավարումը պահանջում է անընդհատ մշտադիտարկում, և դրա արդյունքների հիման վրա նոր կառավարման մոդելների առաջարկում: Վերոգրյալից ելնելով՝ կարևորել ենք

ուսումնասիրությունը հիմնավորել գրական աղբյուրների վերլուծման համատեքստով՝ ընդհանուր պարաօլիմպիկ շարժման, հաշմանդամային սպորտի և նրանցում ընդգրկված մարզաձևերի վերաբերյալ:

Ըստ Լ. Ս.Վիգորսկու՝ «Օլիմպիզմ» հասկացությունը մարզական կյանքի հոգևոր, բովանդակությունն է: Օլիմպիզմի և սպորտի միջև անվիճելի է համագործակցության փաստը, այսինքն՝ սպորտի զարգացումը հանգեցնում է օլիմպիզմի զարգացմանը, և հակառակը: Այս համատեքստում միանշանակ իր ուրույն դերն ունի պարաօլիմպիզմը [1]:

Վ.Վ. Չախարովան, Ռ. Ա. Մալիշևան ուսումնասիրել և ներկայացրել են, որ անարգելք զարգանում և տարածվում են մի շարք մարզաձևեր, որտեղ մասնակցում են հաշմանդամները, հաղթահարելով դարավոր ձևավորված կարծրատիպերը՝ իրենց ֆիզիկական թերությունների նկատմամբ: Սակայն, արատը հաղթահարելու բացասական տեսակետները, անցել են դժվար ճանապարհ, որը հանգեցրել է նոր բանավեճերի ձևավորմանը կապված սահմանափակ հնարավորություններ ունեցող մարդկանց առողջության հետ: Այդ մարդկանց բարեհաջող կենսագործունեության համար սպորտը ստեղծում է հատուկ պայմաններ՝ վերականգնում է հոգեբանական հավասար

րակշռությունը, թույլ է տալիս վերադառնալ լիարժեք կյանք՝ անկախ ֆիզիկական սահմանափակումներից [3]:

Ի.Վ. Սկոլյարովն իր գիտական հոդվածում [6] անդրադարձել է Պարաօլիմպիկ խաղերի հիմնադրման պատմական նախադրյալներին, հիմնադիրներին: Ներկայացրել է պարաօլիմպիկ ամառային և ձմեռային մարզաձևերի ցանկը՝

- **Ամառային՝** ծանրամարտ (պաուերլիֆտինգ), աթլետիկա, նետաձգություն, լող, թույլ տեսողների ձյուդո, հեծանվային սպորտ, սայլակներով թենիս, սայլակներով սուսերամարտ, ֆուտբոլ 7x7, ֆուտբոլ 5x5, սայլակներով բասկետբոլ, ձիասպորտ, հրաձգություն, նստած վոլեյբոլ, սայլակներով ռեգբի, գոլբոլ, սեղանի թենիս, ադապտիվ թիավարություն, առագաստասպորտ, սայլակներով պար, բադմինտոն, բոչո (դիպոկոլոյան խաղ), պարատրիատլոն (750մ լող, 20 կմ հեծանվավազք, 5 կմ վազք սայլակներով), պարաթաեքվանդո: Առաջին ամառային խաղերն անցկացվել են 1960 թվականին Հռոմում:

- **Ձմեռային՝** երկամարտ, դահուկավազք, լեռնադահուկ, սայլակներով կյորլինգ, սահնակներով հոկեյ (սլեջ), սահնակներով վազք (սլեջ): Առաջին ձմեռային խաղերն անցկացվել են 1976 թվականից Շվեյցարիայում՝ Օրնշլոլդսվիկ քաղաքում:

Կարծում ենք մարզաձևերի այսպիսի ընդգրկվածության մակարդակում հասարակությունը կգիտակցի, որ նրանք այնպիսին են, ինչպիսին իրենք են և հուսով են, որ նրանց խնդիրները կգտնեն լուծումներ՝ սոցիալական, կրթական, աշխատանքային, իրավական և այլ մակարդակներում:

Աշխատանքի խնդիրների վերլուծման համար հատուկ ուշադրություն է պահանջում պարաօլիմպիկ շարժման համաշխարհային պրակտիկան: Հաշմանդամային սպորտըն առաջնային ուղղված է անհատական մարզական բարձր արդյունքների նվաճմանը, որը նաև՝ կանխատեսում է Եվրոպայի, աշխարհի պարաօլիմպիկ ռեկորդներ: Պարաօլիմպիկ մարզաձևերի զարգացման գործընթացն առաջադրել է տարբեր ոլորտների մասնագետների համագործակցման արդյունքում մշակել տարբեր վնասվածքներով հաշմանդամների մարզաբժշկական դասակարգում, որը, ինչ խոսք, կարևոր նախապայման է հաշմանդամային սպորտի առջև դրված բազմաբովանդակ խնդիրների լուծումների, հատկապես մրցման հավասար պայմանների ստեղծման համար:

Ս.Ն. Պոպովն [5] իր աշխատանքում ներկայացրել է հաշմանդամային սպորտի զարգացման այն հիմնախնդիրները, որոնք մասնագետների մոտ բանավեճի



խնդիր են: Նրանք գտնում են, որ մարզական միջոցառումները, մրցումները, մարզումները պահանջում են ֆիզիկական, հոգեբանական մեծ լարվածություն, միաժամանակ նշելով, որ այնուհանդերձ հաշմանդամային սպորտային շարժումը գոյություն ունի և շարունակում է զագանալ ամբողջ աշխարհում: Կազմակերպչատեսական նախադրյալների մեջ կարևորվում է օլիմպիական-պարալիմպիկ շարժման ծագումը՝ հին հունական խաղերից մինչև Ստոկ-Մանդևիլի խաղերը, օլիմպիական շարժման ժամանակաշրջանի կայունացումը (1984-1918), օլիմպիական խաղերը Աթենքից Տոկիո, Պարալիմպիկ շարժման կայունացումը 1960 թվականից մինչև մեր օրերը, տարբեր երկրներում օլիմպիական-պարալիմպիկ մարզաձևերի մասսայականացումը և այլն: Պարալիմպիկ խաղերն առանձնակի կարևորվում են միջազգային սպորտի շարժման ոլորտում և առավել ակտիվ են նպաստում օլիմպիզմի արժեքների պահպանմանն ու ընդլայնմանը:

Միջազգային օլիմպիական կոմիտեի (այսուհետ ՄՕԿ), Միջազգային պարալիմպիկ կոմիտեի (այսուհետ ՄՊԿ) և այլ հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպվող բազմաբովանդակալից կոնֆերանսների հիմքում ընկած է օլիմպիզմի՝ Օլիմպիական, պարալիմպիկ շարժման ճանաչման համակարգերի

մշակման գործընթացը: Գիտական շրջանակներում ձևավորվել է պատկերացում, որ օլիմպիզմի մոդելն օժտված է լայն հնարավորություններով, որտեղ առանձնանում է պարալիմպիզմը ծավալելու հունանիստական գաղափարների արմատավորման գործունեությունը:

2017 թվականի սեպտեմբերի 7-ի ՀՀ կառավարության նիստի N38 արձանագրությունը վերաբերվում էր մեր երկրի հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարին՝ վեցամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգից բխող խնդիրների իրականացման 2018-2024 թվականների միջոցառումների ծրագիրը (ստորագրվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի կողմից 2017 թվականի սեպտեմբերի 13-ին):

Նմանատիպ հայեցակարգերը, որոշումներն առավել կարևորում են ուսումնասիրել Պարալիմպիկ շարժման ձևավորման և զարգացման նախադր-

յալները, որոնք միանշանակ գործընթացը կազմակերպելու և զարգացնելու կարևոր հիմքերից մեկն է:

Պարաօլիմպիկ սպորտը՝ որպես խաղաղության ապահովման և զարգացման միջոց, գործում է հիմնադիր ակտերի հիմքերով, որոնք չեն համարվում միջազգային պայմանագրեր, չեն հետապնդում շահույթ, գործունեությունն իրականացնում է 174 երկրներում, 2008 թվականից ունի տնտեսական խորհրդատուի կարգավիճակ Միացյալ ազգերի կազմակերպությունում (այսուհետ՝ ՄԱԿ): Վերջին տարիներին ՄՊԿ-ն սերտ համագործակցում է ՄՕԿ-ի, ՄԱԿ-ի տարբեր մարմինների հետ, մասնավորապես՝ ՄԱԿ-ի միջազգային սպորտի հարցերով բյուրոյի հետ՝ ի նպաստ աշխարհում բարօրության և մարդու իրավունքների գործընթացի զարգացման: ՄՊԿ-ի և ՄԱԿ-ի համագործակցության գլխավոր ուղղությունը 2006 թվականի հաշմանդամների իրավունքների Հռչակագիրն է: Տարբեր կոնֆերանսներում քննարկվում են հարցեր՝ կապված ազգային մակարդակում այն իրականացնելու և կազմակերպելու մշտադիտարկումներ:

Ըստ հաշմանդամության բնույթի՝ իրականացվել են տարբեր կազմակերպչական գործառույթներ, որոնց փոխկապակցվածության մակարդակում մի ձևի զարգացումը նպաստել է հաջորդի ձևա-

վորմանը, մեր դեպքում ադապտիվ սպորտից մինչև պարաօլիմպիկ սպորտ: Ամբողջ աշխարհի հաշմանդամ մարզիկները համախմբված են միջազգային սպորտային կազմակերպությունների շուրջ՝ CISS՝ Խուլիամերի միջազգային մարզական կազմակերպություն՝ 1924թ., ISMWSF՝ Սալյակներով հաշմանդամների միջազգային մարզական ֆեդերացիա՝ 1952թ., ISOD՝ Հենաշարժողական ապարատի վնասվածքներով միջազգային մարզական ֆեդերացիա՝ 1964թ., CP-ISRA՝ Մանկական ուղեղային կաթվածի հետևանքով առաջացած հաշմանդամների միջազգային մարզական կազմակերպություն՝ 1978թ., IBSA՝ Կույրերի միջազգային մարզական կազմակերպություն՝ 1980թ., SOI՝ Մտավոր հետամնաց կարողություններով մարդկանց միջազգային հատուկ օլիմպիականներ՝ 1968թ.:

«Պարաօլիմպիկ սպորտ» հասկացությունը սպորտային պրակտիկա ներդրվել է 1964 թվականից, երբ հաշմանդամների խաղերն անցկացվում են Տոկիոյում: «Պարաօլիպիադա» հասկացությունն օգտագործում է լատինական նշանակության «պարա»՝ միանալ հասկացությունը: Այսպիսով՝ պարաօլիմպիկ հասկացությունը ենթադրում է, որ հաշմանդամների խաղերը միանում են Օլիմպիական խաղերին, կազմակերպվում և անցկացվում են միասին: Այնուհանդերձ, 1968-1994 թվականների ընթացքում Պարաօլիպիական

խաղերն անցկացվել են առանձին՝ ելնելով տարբեր պատճառներից:

Անդրադառնալով ՀՀ-ում պարաօլիմպիկ շարժման ձևավորման արդյունքներին կամ իրավիճակին, միանշանակ կարող ենք շեշտադրել, որ ոլորտում իրականացվող աշխատանքները դեռևս հուսադրող չեն՝ գործնականում ապահովելու պարաօլիմպիկ մարզաձևերի ձևավորումը: Սակայն, կարևորում ենք նշել հաշմանդամային սպորտի շրջանակներում ՀՀ-ում գործող երկու կարևոր կազմակերպությունների առկայությունը՝ Պարաօլիմպիկ կոմիտե և Հաշմանդամային սպորտի ֆեդերացիա, որտեղ մարզվող մարզիկներն արդեն լուրջ քայլեր են կատարում՝ ձեռքբերելու ուղեգրեր՝ մասնակցելու պարաօլիմպիկ խաղերին:

Այսպիսով՝ պարաօլիմպիկ սպորտի հիմնախնդրի արդիականությունը պահանջում է զանգվածային տեղեկատվական միջոցների, քաղաքաշինական, մարզակառույցների շինարարական աշխատանքների, համապատասխան մարզագույքի արտադրման, ձեռքբերման, հատուկ մարզամանկավարժական գործընթացի կազմակերպման, մարզիչների պատրաստման, գիտական ուսումնասիրությունների, ոլորտի կառավարման համալիր գործունեություն:

#### **Եզրակացություն:**

1. Հաշմանդամային սպորտը կամ սահմանափակ հնարավորություններով

մարդկանց սպորտը մարմնավորվում է պարաօլիմպիկ շարժման մեջ: Պարաօլիմպիկ սպորտը՝ որպես հաշմանդամային սպորտի գործոն, որպես սոցիալական երևույթ, ապահովում և բարձրացնում է հաշմանդամների կյանքի որակը:

2. Պարաօլիմպիկ սպորտի զարգացումը՝ որպես ինտեգրացման ոլորտ, պայմանավորված է բնակչության լայն շերտերի մտածելակերպի, գաղափարների, գործնական քայլերի արմատական բարեփոխումներով՝ հանդեպ հաշմանդամությունը և հաշմանդամային սպորտը:

3. Հաշմանդամային սպորտի համակարգում առաջնային է պարաօլիմպիկ սպորտի հետ զուգորդվող մասնագիտական կրթությունը, որի հիման վրա կառուցվող ուսումնադաստիարակչական գործընթացը, մարզական միջոցառումները կապահովեն ֆիզիկական սահմանափակումներ ունեցող մարդկանց նպատակաուղղված սոցիալականացումը և զարգացումը:

4. Պարաօլիմպիկ խաղեր հասկացությունը, որը պաշտոնական կարգավիճակ է ձեռքբերել 1988 թվականից, միանշանակ համակցվում է Օլիմպիական խաղերի՝ «Միասին կամ ձեր կողքին» գաղափարախոսությամբ:

5. Պարաօլիմպիկ սպորտում կիրառվող մարզաձևերը՝ դիտարկելով ֆիզիկական սահմանափակումներ ունեցող

մարզիկների ֆիզիկական պատրաստականության մակարդակի բարձրացման հնարավորություն, հաշմանդամային սպորտի կրթական ծրագրերի բովանդակությունում պետք է ներառի պարալիմպիկ մարզաձևերի պրակտիկական և տեսությունը:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Ա. Գ., Ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի պատմություն և կազմակերպում, Մեթոդական ձեռնարկ, Երևան, 2007, 116 էջ:
2. Бекетов И. Н., Лазарева Ю. В., Молодежь и наука: шаг к успеху, Курск, 2021, стр. 41-44.
3. Захарова В. В., Малышев Р. А., Научно-теоретическое изучение по внедрению паралимпийского и специального олимпийского движения <https://cyberleninka.ru/article/n/nauchno-teoreticheskoe-izuchenie-po-vnedreniyu-paralimpiyskogo-i-spetsialnogo-olimpiyskogodvizheniya/viewer>.
4. Мельничук М. В., Футбол для лиц с ограниченными возможностями, Курск, 2021, стр. 128-138.
5. Попов С. Н., Физическая реабилитация, учебник, Ростов на Дону, 1999, стр.527-595.
6. Склярова И. В., Паралимпийские игры, <https://cyberleninka.ru/article/n/paralimpiyskie-igry/viewer>.

### PARALYMPIC SPORT AS A DIRECTION FOR THE DEVELOPMENT OF DISABILITY SPORTS

*A. G. Harutyunyan, A. G. Stepanyan  
Armenian State Institute of Physical Culture  
and Sport, Yerevan, Armenia*

### ABSTRACT

**Keywords:** Paralympic sport, disabled people, disability sports, adaptive physical culture, Paralympic sport types.

**Research relevance:** The Paralympic Games combine disabled sports with culture and education, as well as create a lifestyle based on educational values.

**Research aim:** The purpose of the research is to study and represent the role of Paralympic sports in the development of disability sports.

**Research methods and organization:** After studying the literary data, the research was carried out in stages based on comparative analysis of historical facts. The prerequisites for the development of the Paralympic movement and the features of the development of Paralympic sports are considered on the case of Paralympic football.

**Research results and analysis:** When analyzing the research tasks, the practice of the Paralympic movement requires special attention starting from rehabilitation sports to the development of Paralympic sports. The development of Paralympic sports makes it necessary for specialists to cooperate and develop a classification of athletes by types of sports, which is an important prerequisite for the development of disability sports.

**Conclusion:** The Paralympic movement as a sphere of integration is conditioned by thinking, ideas, fundamental reforms and practical work with disabled people among the population.

## ПАРАЛИМПИЙСКИЙ СПОРТ КАК НАПРАВЛЕНИЕ РАЗВИТИЯ ИНВАЛИДНОГО СПОРТА

*А. Г. Арутюнян, А. Г. Степанян,  
Государственный институт физической культуры  
и спорта Армении, Ереван, Армения*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** Паралимпийский спорт, инвалиды, инвалидный спорт, адаптивная физическая культура, паралимпийские виды спорта.

**Актуальность исследования:** Паралимпийские игры объединяют инвалидный спорт с культурой и образованием, а также создают жизненный образ на основе воспитательных ценностей.

**Цель исследования:** изучить и представить роль паралимпийских видов спорта в развитии инвалидного спорта.

**Методы и организация исследования:** исследования были реализованы поэтапно после изучения литературных данных, на основе сравнительного анализа исторических фактов. Изучены предпосылки развития паралимпийского движения и особенности развития паралимпийского спорта / на примере паралимпийского футбола/

**Анализ результатов исследования.** При анализе задач исследования особое внимание требует практика паралимпийского движения, начиная с восстановительного

спорта до развития паралимпийского спорта. Развитие паралимпийских видов спорта выдвигает перед специалистами необходимость сотрудничать и разрабатывать классификацию спортсменов по видам спорта, что является важной предпосылкой для развития инвалидного спорта.

**Краткие выводы.** Паралимпийское движение, как сфера интеграции обусловлено мышлением, идеями, коренными реформами практической работы с инвалидами среди населения.

### ***Տեղեկություններ հեղինակների մասին***

Անահիտ Գևորգի Հարությունյան՝ Հասարակական և հումանիտար գիտությունների ամբիոնի պրոֆեսոր, Երևան, Հայաստան,

E.mail: [a.harutyunyan@sportedu.am](mailto:a.harutyunyan@sportedu.am)

Արտակ Գառնիկի Ստեփանյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի, ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Երևան, Հայաստան,

E.mail: [artak.stepanyan@sportedu.am](mailto:artak.stepanyan@sportedu.am)

### ***Information about the authors***

Anahit Gevorg Harutyunyan, Professor of the Chair of Social Sciences and Humanities, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E-mail: [a.harutyunyan@sportedu.am](mailto:a.harutyunyan@sportedu.am)

Artak Garnik Stepanyan, Ph.D. in Pedagogy, Associate Professor of the Chair of Theory of Physical Education, Methodology and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia.

E-mail: [artak.stepanyan@sportedu.am](mailto:artak.stepanyan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 24.06.2023–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 25.06.2023–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան

**ԲԱԺԻՆ 6. ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

ՀՏԴ 796.5

DOI: 10.53068/25792997-2023.2.9-202

**ՍՊՈՐՏԱՅԻՆ ՏՈՒՐԻԶՄԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՎՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ**

*Ս. Հ. Դանիելյան, Ն. Խ. Պեպրոսյան  
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի  
պեդագոգական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

**Առանցքային բառեր:** Սպորտային տուրիզմ, լեռնային պատրաստություն, հանրակրթական դպրոց, առողջ ապրելակերպ, միջառարկայական կապ:

**Հետազոտության արդիականություն:** Ներկայումս տեղի ունեցող տարբեր իրադարձություններ մարդուն ստիպել են մի շարք երևույթներին նայել այլ տեսանկյունից: Յուրաքանչյուր պետության գլխավոր սկզբունքներից մեկն առողջ բնակչություն ունենալն է, հատկապես այժմ, երբ ողջ աշխարհը պայքարում է COVID-19-ի դեմ:

Բնության՝ մարդու վրա դրական ազդեցություն թողնելու մասին վկայել են տարբեր նշանավոր մարդիկ: Արշավող և գրող Դեն Բյուտները պնդում է, որ քայլը երկարակեցության գրավականն է: Նա հետազոտել է Սարդինիի այն բնակիչներին, որոնց տարիքը 100 և ավելի է: Այդ մարդիկ օրական քայլում են այնքան տարածություն, որքան մենք հաղթահարում

ենք մեքենայով կամ ավտոբուսով: Դեն Բյուտները պնդում է, որ դա պարզապես զբոսանք չէ: Նրանց շրջակա միջավայր սարեր և լեռներ են, իսկ քայլը նման պայմաններում նա համարում է որպես մարզում [2]:

Ստենֆորդի համալսարանում իրականացված հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ այն մարդիկ որոնք սիրում և զբաղվում են արշավներով, 60%-ով ավելի ստեղծագործական ունակություններ ունեն նստակյաց մարդկանց համեմատ [3]:

Հայաստանի Հանրապետությունը պատերազմական երկիր է: Վերջին մի քանի տարիներում տեղի ունեցած պատերազմական գործողությունների արդյունքում բազմաթիվ երիտասարդների կորուստն էլ ավելի մեծացրեց ծերերի չափաբաժինը հասարակության մեջ: Նաև ուսումնասիրությունը ցույց տվեց, որ պատրաստվածության բոլոր առումներով

հատկապես ՄՈԲ-ը թույլ էր: Ուստի, պետության առաջնահերթ նպատակներից մեկն առողջ, ֆիզիկապես և գիտելիքներով հարուստ երիտասարդ սերնդի ձևավորումն է, որը հիմք կհանդիսանա մարտունակ բանակի ձևավորմանը [1]:

Պետք է նշել այն փաստը, որ ՀՀ կառավարության 2021 թվականի որոշմամբ զբոսաշրջությունը համարվել է գերակա ճյուղ, որի տեսակներից է նաև սպորտային տուրիզմը [5]:

Ունենալով ոլորտում տարիների փորձ և որպես հիմք վերցնելով Ալպինիզմի ֆեդերացիայի և «4 գագաթ» մանկապատանեկան ակումբի կրթական ծրագրերը՝ նպատակ առաջացավ այն ներդնել հանրակրթական դպրոցներում:

**Հետազոտության նպատակը:** Ուսումնասիրել և գնահատել սպորտային տուրիզմի ներդրման հնարավորությունը հանրակրթական դպրոցներում:

#### **Հետազոտության խնդիրները.**

1. տեսական և գործնական դասերի բովանդակություն մշակում 5-7-րդ դասարանների դպրոցականների համար,

2. կամավորական սկզբունքներով ուսուցիչների հավաքագրում,

3. համապատասխան դպրոցների հետ համագործակցություն,

4. փորձարկում 12-14 տարեկան դպրոցականների վրա,

5. արագացված (պիլոտային) ուսուցում Երևանի 10 դպրոցներում:

**Հետազոտության մեթոդներն են՝** գրական աղբյուրների ուսումնասիրում և վերլուծություն, մանկավարժական դիտում, փաստաթղթերի վերլուծություն, հարցում:

#### **Աշխատանքի կազմակերպումը:**

Պիլոտային ծրագիրը՝ «Լեռնային պատրաստություն» խորագրով, գործարկվել է միաժամանակ 10 դպրոցներում, որին ներգրավվել են 135 դպրոցականներ: Իրականացվել է մայիս-հունիս ամիսներին՝ շաբաթական 2 օր հաճախականությամբ: Բաղկացած է եղել 18 դասաժամից, որոնցից 4-ը՝ գործնական, մեկ դասաժամի տևողությունը՝ 60 րոպե: Երեխաներն ունեցել են 5 արշավ [1]:

Բովանդակային առումով պիլոտային ծրագիրը ներառել է չորս ուղղություն.

#### **Հետիոտն և լեռնային տուրիզմ.**

➤ հետիոտն տուրիզմի և լեռնային տուրիզմի տարբերությունը,

➤ լեռնագնացության պատմությունը Հայաստանում:

#### **Արշավների անվտանգության կազմակերպումը.**

➤ բնական պայմաններից կախված վտանգներ (քարաթափություն, ձնահոսք, փլուզումներ, լեռնային գետեր, բարձրություններ ...),



➤ եղանակից կախված վտանգներ (տեսադաշտի վատացում, ուժեղ արև, ամպրոպ, կայծակ ...),

➤ միջատների, սողունների, թունավոր օձերի և բուսականության հետ կապված վտանգներ,

➤ զբոսաշրջիկի սխալ գործողություններից, թույլ պատրաստականությունից և գույքի պակասից կախված վտանգներ:

### **Տուրիստական հմտություններ.**

Պատրաստություն արշավին: Արշավի նպատակը (երթուղու ընտրություն, արշավի պլանավորում, տեղաշարժման միջոցի ընտրություն, թիմի հավաքագրում, պարտավորությունների բաշխում): Մինչարշավային պատրաստություն: Գույք-հանդերձանք (անհատական և խմբային գույք): Վարքագծի կանոններն արշավի ընթացքում (ձևը, տեմպը, դադարները, սնունդը): Վարքագիծը բնության մեջ (խարույկ, կենդանիների բույն, մաքրություն) և այլն:

### **Մագլցման դաս:**

Տեսական գիտելիքներից զատ իրականացվել են նաև գործնական արշավները.

• Ապակեքար լեռ (3 դպրոց): Հեշտ վերելք:

• Արտենի լեռ (1 դպրոց): Միջին բարդության վերելք:

• Պարզ լճից Գոշավանք (2 դպրոց): Միջին բարդության քայլարշավ:

• Թեղենյաց վանք (2 դպրոց): Հեշտ քայլարշավ:

• Սանահինից Հաղպատ երթուղով (1 դպրոց): Միջին բարդության քայլարշավ:

• Սպիտակավոր (մեկ դպրոց): Միջին բարդության քայլարշավ:

Պիլոտային ծրագիրն իրականացվել է 2022 թվականի մարտ-հունիս ամիսներին:

**Վերլուծություն:** Պիլոտային ծրագրի վերջնարդյունքում փաստեցինք այն, որ երեխաների ակտիվությունը դասերին առավել բարելավվեց: Գործնական և տեսական դասընթացներից հետո երեխաներից ոմանք սկսեցին հետաքրքրվել լեռնագնացությամբ և սկսեցին այցելել «4 գագաթ» մանկապատանեկան արշավական ակումբ: Հարկ է նշել, որ գրանցվեցին բավականին բարձր ցուցանիշներ և՛ խմբային, և՛ անհատական լեռնագնացության մեջ.

1. 2022 թվականի օգոստոսի 20-ին «4 գագաթ» մանկապատանեկան արշավական ակումբի պատանի լեռնագնացները կազմակերպեցին վերելքներ ՀՀ սահմաններից դուրս:

2. Տիգրան Մոսիկյանը, որը մասնակցել է պիլոտային ծրագրին և «4 գագաթ» ակումբի անդամ է, գրանցեց անձնական ռեկորդ՝ 14 տարեկանում կանգնեց Արարատի գագաթին:

Սպորտային տուրիզմը երեխաների մոտ ձևավորում է հայրենաճանաչություն:

Նրանք շոշափելի կերպով ծանոթանում են երկրի սահմաններին, բնությանը, պատմամշակութային վայրերին:

Սպորտային տուրիզմը երեխաների մեջ ձևավորում է թիմային աշխատանք, սովորեցնում է օգնել մեկը մյուսին և բարդ պայմաններում միասին լուծել խնդիրները:

Փաստենք այն, որ հատկապես մեծ էր ծնողների ոգևորվածությունը և ներգրավվածությունը կազմակերպչական հարցերում և ծնողների մեծամասնությունը նախընտրեց իրենց երեխաներին ուղղորդել այցելել արշավական խմբակներ, որը համարում ենք մեր ամենամեծ ձեռքբերումը:

Գրանցված ցուցանիշները խոսում են այն մասին, որ պատանիների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը շատ բարձր է: Կազմակերպվածությունը և հեգեբանական պատրաստվածությունը իրենց զգալի կշիռն են ունեցել բարեհաջող վերելքների իրականացման գործում: Արշավների ժամանակ ստուգվել են երեխաների գիտելիքները տարբեր հանձնարարությունների միջոցով և վերջնարդյունքում եկել ենք այն փաստին, որ գիտելիքների իմացության առումով թերացումներն աննշան են: Երեխաները գործնականում կարողացան օգտագործել մատուցված տեսական գիտելիքները:

Այնուամենայնիվ, այս փուլում խորապես չենք ուսումնասիրել պատանիների

պատրաստության սկզբնական վիճակը: Հետևաբար, մեր հետազոտությունները շարունակելի են:

### **Եզրակացություն:**

Մեր կատարած աշխատանքի արդյունքում վեր հանեցինք կարևորագույն կետեր, որոնք փաստում են հանրակրթական դպրոցներում լեռնային տուրիզմի դրական և կարևոր նշանակության մասին.

1. Սպորտային տուրիզմի յուրաքանչյուր տարր ուղղված է առողջության պահպանմանը և առողջ ապրելակերպի կարևորագույն խթանիչ է համարվում: Այն առողջ հասարակություն ձևավորելու միտումներ ունի:

2. Սպորտային տուրիզմն իր տարատեսակ խաղային, էքստրեմալ և հետաքրքիր ուղղություններով կարող է ապահովել դպրոցականների մոտիվացիան, երեխաների շարժողական ակտիվությունը, բարելավել միջառարկայական կապը:

3. Մարտունակ բանակ ունենալու խթանիչ է, հատկապես, եթե ուսուցանվի վաղ տարիքից:

Կատարած աշխատանքը հաջողվեց և 2023 թվականին պիլոտային ծրագրի վերջնարդյունքում «Լեռնային պատրաստություն» առարկայի թեմաները ներառվեցին ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից լույս տեսած ՆԶՊ դասագրքերում:

Հետագա ծրագրերում պետք է ուշադրություն դարձնել երեխաների ֆիզիկական պատրաստվածության սկզբնական և վերջնական արդյունքների, ինչպես նաև երեխաների վերլուծողական և խնդիրների ավտերնատիվ լուծման հատկությունների զարգացման վրա:

Այս հետազոտությունը շարունակական է. վերլուծվելու է սպորտային տուրիզմ, մասնավորապես՝ «Լեռնային պատրաստություն» առարկայի թողած ազդեցությունը աշակերտների առողջության, ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության վրա:

### 📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Голев А. Г., Андреева Е. В., Методика организации летнего отдыха детей и подростков. Пятигорск, 2009. 217 с.
2. Дэн Бюттнер, Правила долголетия, издательство Манн Иванов и Фербер. Москва, 2013. 192 с.
3. armalp.am
4. 4peaks.am
5. [https://mineconomy.am/media/9557/TourismStrategy\\_2020-2030.pdf](https://mineconomy.am/media/9557/TourismStrategy_2020-2030.pdf)

## THE IMPORTANCE OF INTRODUCING SPORTS TOURISM IN PUBLIC SCHOOLS

*S. H. Danielyan, N. K. Petrosyan  
Armenian State Institute of Physical Culture  
and Sport, Yerevan, Armenia*

### ABSTRACT

**Keywords:** Sports tourism, mountain training, public school, healthy lifestyle, interdisciplinary connection.

**Research relevance:** Various events taking place at present have made people look at a number of phenomena from a different perspective. One of the main principles of every state is to have a healthy population, especially now that the whole world is fighting against COVID-19.

As a result of a study conducted at Stanford University, it became clear that people who love and are engaged in hiking have 60% more creative abilities than sedentary people.

It should be noted that according to the decision of the RA Government in 2021, tourism, sports tourism, was considered one of priority branches.

**Research aim:** The aim of the research is to study and evaluate the possibility of implementing sports tourism in public schools.

The problems of the research are:

1. Development of theoretical and practical lesson content for schoolchildren at the age of 5-7.
2. Recruitment of teachers on a voluntary basis
3. Cooperation with relevant schools
4. Testing on 12-14 year old schoolchildren.
5. Accelerated (pilot) training in 10 schools of Yerevan.

**Research methods and organization:** The pilot program, entitled "Mountain Preparation", was launched simultaneously in 10 schools, involving 135 schoolchildren. It was carried out from May to June, with a frequency of 2 days a week. It consisted of 18 lessons, 4 of which were practical. The duration of one lesson was 60 minutes. The children had 5 campaigns.

In terms of content, the pilot program included four areas.

**Conclusion:** As a result of our work, we highlighted important points documenting the positive and important significance of mountain tourism in public schools.

1. Every element of sports tourism is aimed at maintaining health and is considered an important promoter of a healthy lifestyle. It has tendencies to form a healthy society.
2. Sports tourism with its various game, extreme and interesting directions can provide schoolchildren's motivation, children's movement activity, improve interdisciplinary connection.
3. It can be incentive to have a fighting army, especially when taught from an early age.

The work done was successful and as a result of the pilot program in 2023, the topics of the "Mountain Preparation" subject were included in Premilitary Training textbooks published by the Ministry of Education and Culture.

Future programs should focus on children's physical fitness initial and final outcomes, as well as the development of children's analytical and alternative problem-solving skills.

This research will be ongoing and will analyze the impact of sports tourism, specifically Mountain Training, on students' health, physical and psychological fitness.

## ЗНАЧИМОСТЬ ВНЕДРЕНИЯ СПОРТИВНОГО ТУРИЗМА В ОБЩЕОБРАЗОВАТЕЛЬНЫХ ШКОЛАХ

*С. Х. Даниелян, Н. К. Петросян*  
*Государственный институт физической культуры*  
*и спорта Армении, Ереван, Армения*

### АННОТАЦИЯ

**Ключевые слова:** Спортивный туризм, горная подготовка, общеобразовательная школа, здоровый образ жизни, межпредметная связь.

**Актуальность исследования:** Различные события, происходящие в настоящее время, заставили людей взглянуть на ряд явлений с иной точки зрения. Один из главных принципов каждого государства — иметь здоровое население, особенно сейчас, когда весь мир борется с COVID-19.

В результате исследования, проведенного в Стэнфордском университете, выяснилось, что у людей, любящих и занимающихся пешим туризмом, творческих способностей на 60% больше, чем у людей, ведущих малоподвижный образ жизни.

Следует отметить тот факт, что согласно постановлению Правительства РА от 2021 года приоритетной отраслью считался туризм, одной из которых является спортивный туризм.

**Цель исследования:** Изучить и оценить возможность внедрения спортивного туризма в общеобразовательные школы.

#### **Задачи исследования:**

1. Разработка теоретического и практического содержания занятий для школьников 5-7-ых классов.
2. Тестирование туристических навыков у школьниках 12-14 лет.
3. Внедрение пилотной программы обучения в 10 школах г. Еревана.

**Организация исследования:** Пилотная программа «Горная подготовка» была запущена одновременно в 10 школах, в ней приняли участие 135 школьников. Проводится в мае-июне с периодичностью 2 дня в неделю. Он состоял из 18 уроков, 4 из которых были практическими. Продолжительность одного занятия – 60 минут. У детей было 5 походов.

По содержанию пилотная программа включала четыре направления

**Анализ полученных результатов:** В результате нашей работы мы выделили важные моменты, подтверждающие положительное и важное значение горного туризма в государственных школах.

1. Каждый элемент спортивного туризма направлен на сохранение здоровья и считается важным пропагандистом здорового образа жизни. Он имеет тенденции к формированию здорового общества.

2. Спортивный туризм с его разнообразными игровыми, экстремальными и интересными направлениями может обеспечить мотивацию школьников, двигательную активность детей, улучшить межпредметные связи.

3. Иметь боевую армию может быть стимулом, особенно, если ее учат с раннего возраста.

Проделанная работа прошла успешно и в результате пилотной программы в 2023 году темы предмета «Горная подготовка» были включены в учебники ПНД, издаваемые Министерством образования и культуры.

Будущие программы должны быть сосредоточены на начальных и конечных результатах физической подготовки детей, а также на развитии у детей аналитических и альтернативных навыков решения проблем.

Это исследование будет продолжаться и будет анализировать влияние спортивного туризма, в частности горной подготовки, на здоровье, физическую и психологическую подготовку студентов.

**Краткие выводы:** Проделанная работа увенчалась успехом и по результатам пилотной программы в 2023 году темы предмета «Горная подготовка» были включены в учебники по предварительной военной подготовке, издаваемые Министерством образования, науки, культуры и спорта.

### **Տեղեկություններ հեղինակների մասին**

Սուրեն Հակոբի Դանիելյան՝ մ.գ.թ, Աղվան Չատինյանի անվան Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնի վարիչ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: [suren.danielyan@sportedu.am](mailto:suren.danielyan@sportedu.am),

Նարեկ Խաչատուրի Պետրոսյան՝ Աղվան Չատինյանի անվան Սպորտային տուրիզմի և փրկարարական գործի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

E.mail: [narek.petrosyan@sportedu.am](mailto:narek.petrosyan@sportedu.am)

***Information about the author***

Suren Hakob Danielyan - PhD, Assistant Professor, Head of the Chair of Sports Tourism and Rescue Work after Aghvan Chatinyan, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [suren.danielyan@sportedu.am](mailto:suren.danielyan@sportedu.am),

Narek Khachatur Petrosyan - Lecturer of the Chair of Sports Tourism and Rescue Work after Aghvan Chatinyan, Armenian State Institute at Physical Culture and Sport, Yerevan, Armenia,

E-mail: [narek.petrosyan@sportedu.am](mailto:narek.petrosyan@sportedu.am)

Հոդվածն ընդունվել է 23.04.2023-ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 24.04.2023-ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ե. Հակոբյան

### ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ

«Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ» խորագրով պարբերականում հրատարակվում են ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտների գիտական և գիտամեթոդական հոդվածներ:

**Պարբերականն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ–ի գիտական հրատարակությունների ցանկում:**

#### Պարբերականի հիմնական բաժիններն են՝

1. Օլիմպիական սպորտ. օլիմպիզմը, օլիմպիական կրթությունը և ժառանգությունը ժամանակակից սպորտում
2. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժական հիմնախնդիրները
3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հոգեբանական հիմնախնդիրները
4. Սպորտային գործունեության և առողջ ապրելակերպի բժշկականսաբանական հայեցակետերը
5. Ֆիզիկական վերականգնման հիմնախնդիրները սպորտում
6. Ադապտիվ ֆիզիկական կուլտուրան և ադապտիվ սպորտը ժամանակակից աշխարհում
7. Սպորտային տուրիզմի զարգացման հեռանկարները
8. Սպորտի կառավարման նորարարական տեխնոլոգիաները

**Հոդվածներն ընդունվում են՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:**

Պարբերականի հոդվածների ընդունման և հրատարակման ժամկետները.

N	Ընդունում	Հրատարակում
1.	դեկտեմբերի 1 – մարտի 1	մայիս
2.	ապրիլի 1 – հուլիսի 1	սեպտեմբեր
3.	օգոստոսի 1– նոյեմբերի 1	դեկտեմբեր



### Տեխնիկական պահանջներ

- Էջի վերևում՝ ձախ անկյունում, նշվում է հոդվածի **համընդհանուր տասնորդական դասակարգման՝ ՀՏԴ (ՄԸԿ) կոդը.**
- 1 ինտերվալ ներքև՝ էջի կենտրոնում, գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 12),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ 1 տողով՝ հեղինակների (3-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold, տառաչափը՝ 11),
- 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ կազմակերպության, քաղաքի, երկրի անվանումները՝ թավ (bold, տառաչափը՝ 11),
- 1 ինտերվալ ներքև՝ էջի լայնությամբ, նշվում են առանցքային բառերը և բառակապակցությունները (8–10 բառ),
- 1 ինտերվալ ներքև՝ առանձին պարբերությամբ ներկայացվում է բուն տեքստը:
- Հոդվածի ամբողջ ծավալը **6–8 լրիվ էջ է (ներառյալ աղյուսակներ, պրամագրեր):**
- Տեքստի ձևաչափը՝ A4 ֆորմատի թուղթ (210x297 մմ), MS Word 2007, տառատեսակը՝ GHEA Grapalat (հայերեն), Times New Roman (անգլերեն և ռուսերեն), տառաչափը՝ 12, տեքստը՝ էջի լայնությամբ հավասարեցված, առանց տողադարձերի:
- Միջտողային տարածությունը՝ 1, էջի յուրաքանչյուր կողմից 2 սմ լուսանցք, նոր պարբերությունը՝ 1 սմ:
- Հոդվածի բոլոր բաժինների անվանումները՝ առանցքային բառեր, արդիականություն, հետազոտության նպատակ, հետազոտության խնդիրներ և այլն, նշվում են՝ թավ (bold):

### Տեքստի կառուցվածքը.

#### Առանցքային բառեր:

**Հետազոտության արդիականություն:** Ներառում է հիմնախնդրի ուսումնասիրության կարևորությունը, վիճակը և արտացոլումը գրական աղբյուրներում:

#### Հետազոտության նպատակը, խնդիրները:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Նշվում են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները՝ մեկ տողով՝ օգտագործված սարքեր, հետազոտվողների քանակակազմ, հետազոտության կազմակերպում (վայրը, տևողությունը, ժամանակահատվածը):

**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Ներկայացվում են և վերլուծվում հետազոտության արդյունքում ստացված տվյալները, փաստերը, տրվում աղյուսակներ և տրամագրեր (**ընդհանուր՝ 2-ից ոչ ավելի՝ սև-սպիտակ**): Աղյուսակի վանդակում թվի բացակայության դեպքում դրվում է գծիկ:

**Եզրակացություն:** Համառոտ ներկայացվում են հետազոտության արդյունքների վերլուծության հիման վրա կատարված եզրահանգումները՝ չլրկնելով հոդվածի այլ բաժիններում տրված ձևակերպումները (կարելի է ներկայացնել նաև առաջարկություններ):

**Գրականություն:** Ըստ այբբենական կարգի՝ համարակալված ներկայացվում է 5-10 գրական աղբյուր, որից 50%-ը՝ վերջին 10-ը տարվա հրատարակության:

Սկզբից տրվում են հոդվածի լեզվով աղբյուրները, որից հետո՝ օտարալեզու: Հղումները տեքստում կատարվում են քառակուսի փակագծերում՝ նշելով գրականության աղբյուրի հերթական համարը, օրինակ՝ [3] կամ [1,5,6]:

**Ամփոփագիր: Բոլոր բաժինների տառաչափը՝ 12, թավ (bold),**

➤ 1 ինտերվալ ներքև ներկայացվում են ամփոփագրերը՝ 2 լեզվով. հայերեն տեքստին՝ անգլերեն և ռուսերեն, ռուսերեն տեքստին՝ հայերեն և անգլերեն, անգլերենին՝ հայերեն և ռուսերեն:

➤ Էջի կենտրոնում՝ գլխատառերով գրվում է հոդվածի վերնագիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 12),

➤ 1 ինտերվալ ներքև՝ աջից՝ մեկ տողով հեղինակների (3-ից ոչ ավելի) անվան, հայրանվան սկզբնատառերը, ազգանունը՝ լրիվ՝ թավ (bold, տառաչափը՝ 11),

➤ 1 ինտերվալ ներքև՝ կազմակերպության լրիվ անվանումը, քաղաքը, երկիրը՝ թավ (bold, տառաչափը՝ 11):

➤ 1 ինտերվալ ներքև տրվում է հոդվածի ամփոփագիրը (**ABSTRACT, АННОТАЦИЯ՝ 230-250 բառ,**

➤ 1 ինտերվալ ներքև ներկայացվում են առանցքային բառերը կամ բառակապակցությունները (**8-10 բառ**):

**Հոդվածի ամփոփագրում պետք է առանձնացվեն հետևյալ բաժինները՝**

1. Առանցքային բառեր
2. Հետազոտության արդիականություն (3-4 նախադասություն)
2. Հետազոտության նպատակ
3. Հետազոտության մեթոդներ և կազմակերպում
4. Ստացված արդյունքների վերլուծություն
5. Համառոտ եզրակացություն

**Ամփոփագրի ընդհանուր ծավալը՝ 230-250 բառ:**

Օտար լեզուներով ամփոփագրերն ունեն կարևոր նշանակություն, քանզի տվյալ ոլորտի օտարերկրյա մասնագետի համար բովանդակում են հոդվածի վերաբերյալ հիմնական տեղեկատվություն: Ամփոփագրի հիման վրա մասնագետը կարող է հոդվածն ուսումնասիրել ամբողջությամբ և կատարել համապատասխան հղումներ:

.....

Ամփոփագրից 1 ինտերվալ ներքև՝ 11 տառաչափով, նշվում են տեղեկություններ հեղինակի(ների) մասին՝ անուն, հայրանուն, ազգանուն՝ ամբողջությամբ, գիտական աստիճան, գիտական կոչում, զբաղեցրած պաշտոն (ամբիոն, ստորաբաժանում), կազմակերպության լրիվ անվանումը, քաղաքը, երկիրը, հեղինակի էլեկտրոնային հասցեն, **ORCID-ը (եթե առկա է):**

*Հեղինակների մասին տեղեկությունները ներկայացվում են՝ 2 լեզվով. հայերեն տեքստի հայերեն և անգլերեն, ռուսերեն տեքստի՝ ռուսերեն և անգլերեն, անգլերենին՝ անգլերեն և հայերեն:*

Վերը նշված պահանջներին չհամապատասխանող հոդվածները չեն ընդունվում և չեն ուղարկվում խմբագրական հանձնախումբ՝ հետագա գրախոսման:

Հեղինակը 10-ն օրվա ընթացքում իր էլեկտրոնային հասցեով տեղեկացվում է հոդվածի ընդունման, անհրաժեշտ շտկումներ կատարելու կամ հոդվածի մերժման մասին:

Խմբագրական հանձնախմբի դրական եզրակացությունից հետո կատարվում է համապատասխան վճարում:

Նյութերն անհրաժեշտ է ներկայացնել՝ էլեկտրոնային և 1 օրինակ տպագիր տարբերակով:

Հոդվածը նախկինում պետք է հրատարակված չլինի:

**Հոդվածի բովանդակության պատասխանատուն հեղինակն է:**

**Յուրաքանչյուր հոդված ստուգվում է անտիպլագիատով:**

**Յուրաքանչյուր հեղինակ պարբերականի 1 համարում կարող է ներկայացնել 1-ից ոչ ավելի գիտական աշխատանք:**

**Յուրաքանչյուր հոդվածին տրվում է միջազգային թվային համարանիշ՝ DOI:**

**Ասպիրանտները և հայցորդները հոդվածի հետ (առանց համահեղինակի) պետք է ներկայացնեն կարծիք՝ ոլորտի գիտնականի կամ առաջատար մասնագետի կողմից:**

*Հոդվածները ներկայացնել հետևյալ հասցեով՝*

*Երևան 0070, Ալեք Մանուկյան 11, 2-րդ հարկ՝ Գիտահամակարգող բաժին, հեռախոսներ՝ (010) 55-33-10/1-64, 055.36.89.19 Երանուհի Սիմոնյան, էլ. հասցե՝ [eranuhi.simonyan@sportedu.am](mailto:eranuhi.simonyan@sportedu.am)*

### **Հոդվածի ձևակերպման օրինակ**

**ՀՏԴ 796.33**

**ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՍՊՈՐՏԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՆՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ**

**Ա. Մ. Ոսկանյան<sup>1</sup>, Կ. Ռ. Սերոբյան<sup>2</sup>**

<sup>1</sup> Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան,

<sup>2</sup> Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստան

**Առանցքային բառեր:** Սոցիալականացում, արդի հասարակություն, սպորտ, անձի զարգացման գործառույթ, առողջության ամրապնդում:

### **Գրականության ձևակերպման օրինակ**

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Գրիգորյան Յու.Գ., Չատինյան Ա.Ա., Կարապետյան Ի.Ք., Ֆիզիկական կուլտուրայի անհրաժեշտությունն ուսանողների տեսանկյունից, Հանրապետական 29-րդ գիտամեթոդական կոնֆերանսի թեզիսներ, Երևան, 2002, էջ 15:

2. Մանուկյան Ա.Լ., Ընտանեկան դաստիարակության հիմնահարցը հայ էթնոմանկավարժական մշակույթում, Ատենախոսության սեղմագիր ..., մանկ. գիտ. թեկ., Երևան, 2020, 22 էջ:

3. Ղազարյան Ֆ. Գ., Սպորտային պատրաստության հիմունքները, Դասագիրք, Երևան, Ջոքեր հրատ., 1993, 212 էջ:

4. Терехина Р.Н., Уровень специальной подготовленности лидеров гимнастического помоста в первый год олимпийского цикла / Р.Н. Терехина, С.В. Борсиенко, Н.Н. Коврижных // Ученые записки университета имени П. Ф. Лесгафта. – 2017. – № 10 (152). – С. 244-248.

5. Dowling M., Edwards J. & Washington M., Understanding the Concept of Professionalisation in Sport Management Research, Sport Management Review, 2014; 17(4)p. 520–529.

6. Романовская Н.Е., Понятие профессиональной компетенции [էլեկտրոնային ռեսուրս]

[http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11\\_life\\_long\\_learning\\_5\\_10.pdf](http://media.miu.by/files/store/items/lifelong/11/11_life_long_learning_5_10.pdf)

[մուտք՝ 12.05.2023]

7. <https://fkis.ru/page/1/161.html> [մուտք՝ 12.05.2023]

**Տեղեկություններ հեղինակների մասին (ձևակերպման օրինակ)**

Արմեն Մայիսի Ոսկանյան՝ մ.գ.թ., Սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: a.vosk@sportedu.am,

ORCID: 0000-0001-6608-6635

Կարեն Ռազմիկի Սերոբյան՝ մագիստրանտ, Շիրակի պետական համալսարան, Գյումրի, Հայաստան, E.mail: k.ser@ssy.am,

ORCID: 0000-0002-5711-5784

**Information about the authors (Example of formulation)**

Armen Mayis Voskanyan, PhD Associate Professor of the Department of Sports Pedagogy and Psychology, Armenian State Institute of Physical Culture and Sports, Yerevan, Armenia, E-mail: [a.vosk@sportedu.am](mailto:a.vosk@sportedu.am), ORCID: 0000-0001-6608-6635

Karen Razmik Serobyan, Student of Master's Degree, Shirak State University, Gyumri, Armenia, E-mail: [k.ser@ssy.am](mailto:k.ser@ssy.am), ORCID: 0000-0002-5711-5784

**ԿԱՐԾԻՔ**

**«Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ»  
պարբերականի հոդվածի**

Հոդվածի վերնագիր. \_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հոդվածի հեղինակի անուն, ազգանուն (գիտական աստիճան, կոչում).  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Թեմայի արդիականության հիմնավորման աստիճան.  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

Հետազոտության նպատակի հստակ ձևակերպում.  
\_\_\_\_\_  
\_\_\_\_\_

---

---

---

---

**Գիտական նորույթ.** \_\_\_\_\_

---

---

---

---

**Հետազոտության տեսական ու գործնական նշանակություն.** \_\_\_\_\_

---

---

---

---

---

**Ընտրված մեթոդների համապատասխանությունը հետազոտության խնդիրներին.**

---

---

---

---

---

---

---

---

**Հետազոտության արդյունքների վերլուծության աստիճան.**

---

---

---

---

---

---

Եզրակացության համապատասխանությունը հետազոտության խնդիրներին.

---

---

---

---

Վերջին 10 տարում ուսումնասիրված գրականություն (տոկոս).

---

---

Դիտողությունները և առաջարկությունները (տվյալների մաթեմատիկական ոչ լիարժեք մշակում, չհիմնավորված դատողություններ, տեխնիկական բնույթի թերություններ, ամփոփագրի թերի ներկայացում և այլն).

---

---

---

---

---

---

---

---

Հոդվածը տպագրության երաշխավորելը.

---

---

---



Գրախոս՝ \_\_\_\_\_

(գիտական աստիճան, կոչում, անուն, ազգանուն)

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

« \_\_\_\_\_ » « \_\_\_\_\_ » 202 թ.

**Հոդվածների կարծիքները ներկայացնել ստորագրված՝ սկանավորված PDF տարբերակով:**

**ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ. ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

*Գիտամեթոդական պարբերական*

**SCIENCE IN SPORT: MODERN ISSUES**

*Scientific and methodical journal*

**НАУКА В СПОРТЕ: СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ**

*Научно-методический журнал*

**№ 2 (9)**

Սրբագրիչ՝

Ե.Վ.Սիմոնյան

Համակարգչային  
ձևավորող՝

Լ.Ա.Մեծոյան